

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՈՒՂԵՑՈՒՅՑ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ
ՀԱՄԱՐ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 2018 թ.

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 2018թ.

ՈՒՂԵՑՈՒՅՑ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



Այս ուղեցույցը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով (ԱՄՆ ՄԶԳ): Ուղեցույցի բովանդակության համար պատասխանատու են միմիայն հեղինակները և այն պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան.....	3
Մաս 1. ԱՌԱՋՆԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....	5
1.1. Պոտենցիալ հաճախորդներ	5
1.2. Հաճախորդի կողմից ներկայացված փաստերի իրավական գնահատական.....	9
Մաս 2. ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ.....	13
2.1. Ընտրական իրավունքի դեմ ուղղված հանցագործություններ.....	13
2.2. Քրեական գործ հարուցելու կարգը.....	52
Մաս 3. ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՍՏՈՒՄՆԵՐ.....	67
3.1. Ընտրական իրավունքի դեմ ուղղված վարչական իրավախախտումներ.....	67
3.2. Վարչական պատասխանատվության ենթարկելու կարգը.....	88
Մաս 4. ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	103
4.1. Որոշումների, գործողությունների, անգործության բողոքարկումը վարչական կարգով.....	103
4.2. Որոշումների, գործողությունների բողոքարկումը դատական կարգով.....	113

Նախաբան

Սույն ուղեցույցը մշակվել է Ամերիկյան Իրավաբանների Ընկերակցության CEELI INC.-ի Հայաստանյան Ներկայացուցչության կողմից «Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության խթանում բոլորի համար» ծրագրի շրջանակներում¹: Ուղեցույցը, որը մշակել է փաստաբան, իրավաբանական գիտությունների թեկնածու Դավիթ Ռազմիկի Հունանյանը, նախատեսված է փաստաբանների համար և կոչված է օժանդակել վերջիններիս՝ ՀՀ ազգային ժողովի 2018թ.-ի արտահերթ ընտրությունների կապակցությամբ ընտրական իրավունքի բնագավառում ծառայություններ մատուցելիս: Ուղեցույցը նպատակաուղղված է նաև բարձրացնելու մարդու իրավունքների և իրավապաշտպան մեխանիզմների վերաբերյալ հասարակության իրազեկվածության մակարդակը: Նկատի ունենալով, որ փաստաբանի աջակցությանը կարող են դիմել տարբեր իրավունքի սուբյեկտներ՝ սկսած ֆիզիկական անձանցից (ընտրողներից) մինչև համապատասխան կուսակցություն՝ ուղեցույցը նախնառաջ պարզաբանում է այն իրավունքի սուբյեկտների շրջանակը, որոնք հնարավոր է՝ դիմեն փաստաբանի օգնությանը, ինչպես նաև՝ նրանցից յուրաքանչյուրի իրավունքները՝ համապատասխան դիմումներ, բողոքներ ներկայացնելու վերաբերյալ:

Բացի դրանից, ուղեցույցի առաջին մասի մեջ փորձ է արված լուսաբանել, թե հաճախորդի կողմից ներկայացված որ փաստերն ունեն իրավական նշանակություն և կարող են կանխորո-

¹ Սույն ուղեցույցը արտահայտում է հեղինակների կարծիքը և հաստատված չէ Ամերիկյան իրավաբանների ընկերակցության ներկայացուցիչների պալատի և կառավարիչների խորհրդի կողմից, ուստի և չի ներկայացնում Ամերիկյան իրավաբանների ընկերակցության դիրքորոշումներն ու տեսակետները:

շել իրավաբանական ծառայության հետագա ընթացքը: Մասնավորապես, կարևորվում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ի՞նչ իրավունքներ են խախտվել, դիմողն արդյո՞ք իրավասու է բողոքարկել համապատասխան որոշումը, գործողությունը (անգործությունը), թե ոչ, արդյո՞ք խախտումն իր մեջ պարունակում է քրեական օրենքով արգելված կամ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված արարքի հատկանիշներ, թե ոչ, ի՞նչ ընթացակարգով է հնարավոր իրագործել հաճախորդի շահերի պաշտպանությունը՝ վարչական, թե դատական, և այլն: Աշխատանքի մնացած մասերը համապարփակ ներկայացնում են օրենսդրական կարգավորումներն՝ ըստ փաստաբանի աշխատանքի համապատասխան ուղղությունների: Մասնավորապես, երկրորդ մասը նախատեսում է քրեաիրավական բնույթի խախտումների շրջանակը, ինչպես նաև պարզաբանվում է քրեական գործ հարուցելու կարգը: Երրորդ մասը ներկայացնում է այն իրավախախտումները, որոնց համար նախատեսված է վարչական պատասխանատվություն, ինչպես նաև պարզաբանված է, թե ով է իրավասու՝ կազմել արձանագրություն՝ վարչական իրավախախտում կատարելու մասին, և թե ինչպես է անձը ենթարկվում վարչական պատասխանատվության դատական կարգով: Վերջապես, առաջնային խորհրդատվության ընթացքում ստացված և իրավական գնահատականի արժանացած փաստերից կարող է պարզվել, որ հաճախորդի կողմից ներկայացված իրավիճակն իր մեջ չի պարունակում բացառապես քրեական կամ վարչական իրավախախտում, կամ՝ բացի դրանից առկա է նաև հիմք տվյալ ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը, անգործությունը, քվեարկության արդյունքները վիճարկելու համար: Այդ նպատակով ուղեցույցի վերջին մասը ներկայացնում է այն ընթացակարգերը, որոնք կիրառելի են այսպիսի դեպքերում:

Մաս 1. ԱՌԱՋՆԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1.1. Պոտենցիալ հաճախորդներ

2018 թվականի դեկտեմբերին կանխատեսվում են Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ: Այդ կապակցությամբ ծավալվող հասարակական հարաբերությունները մանրակրկիտ կարգավորված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Մասնավորապես, գործող իրավունքի նորմերը կարգավորում են բոլոր ընտրական գործընթացները՝ նախատեսելով դրանց մասնակիցների իրավունքները, պարտականությունները, լիազորությունների շրջանակը: Այսպես, ընտրական իրավահարաբերություններին մասնակցում են տարբեր իրավունքի սուբյեկտներ՝ ընտրողներ, համապատասխան ընտրություններին մասնակցող կուսակցություն, կուսակցությունների դաշինք, կուսակցության լիազոր ներկայացուցիչ, թեկնածու, դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպություն, դիտորդ, այցելու, քարոզչության կողմ, վստահված անձ, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչ, համապատասխան ընտրական հանձնաժողով, դրա անդամ և այլն:

Թվարկված անձանցից յուրաքանչյուրը պոտենցիալ հաճախորդ է, քանի որ նրանցից յուրաքանչյուրը կարող է դիմել փաստաբանին՝ հայցելով աջակցություն կամ հայտնելով որոշակի հանգամանքներ, որոնք ըստ իրեն՝ պարունակում են համապատասխան խախտման հատկանիշներ: Ավելին, հնարավոր է՝ փաստաբանին դիմեն նաև անձինք, որոնք չեն մասնակցել ընտրական գործընթացների, սակայն տեղյակ են համապատասխան ապօրինության մասին: Փաստաբանի առաքելությունն է

լսել հաճախորդին, արձանագրել ստացված տվյալները՝ փաստական հանգամանքների մասին: Որպես կանոն հաճախորդի կողմից փոխանցված տեղեկատվության որոշակի հատվածը չունի որևիցե իրավական նշանակություն: Այդ նպատակով անհրաժեշտ է սահմանազատել փաստերը գնահատողական բնույթի հասկացություններից, ինչպես նաև՝ կարևոր փաստերն անկարևորներից: Հաճախ ֆիզիկական անձը, ինքնուրույն գնահատելով իրեն հայտնի դարձած տվյալները, փաստաբանին դիմելիս ներկայացնում է եզրահանգումներ՝ այս կամ այն անձի կամ մարմնի գործողությունների վերաբերյալ, որոնք ունեն գնահատողական բնույթ: Օրինակ, հնարավոր են այսպիսի արտահայտություններ՝ «նա հաստատ բաժանել է կաշառք», կամ ընդհակառակը՝ «ես ճանաչում եմ իրեն, լավ մարդ է, դժվար թե նա գումար վերցրած լինի», «տվյալ անձնավորությունը սպառնաց լրագրողին» և այլն: Առաջին հայացքից հասկանալի և պարզ թվացող այս կանոններն ունեն գործնական մեծ նշանակություն անմիջապես ընտրությունների ընթացքում՝ դեպքի վայրում, երբ անհրաժեշտ է արագ կողմնորոշվել և լուծում տալ բարձրացված խնդրին: Այդ նպատակով անհրաժեշտ է առաջին հերթին ուշադրություն դարձնել բացառապես այն փաստական հանգամանքներին, որոնք հանդիսանում են համապատասխան իրավունքի նորմի հիպոթեզի (պայմանների) կամ դիսպոզիցիայի (կանոնի) մասնավոր դրսևորում: Մասնավորապես, իրավունքի նորմի նշված բաղկացուցիչ մասերն արտահայտված են նորմատիվ իրավական ակտերի մեջ համապատասխան ձևակերպումներով, բառերի և արտահայտությունների կիրառմամբ: Փաստաբանի խնդիրն է առանձնացնել այն իրավունքի նորմերը, որոնց բովանդակությունը վերաբերում է հաճախորդից ստաց-

ված տեղեկատվությանը: Օրինակ, եթե անձը գանգատվում է, որ իրեն ուղղորդել են քվեարկության ընթացքում, անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքի մեջ որոնել «քվեարկություն», «քվեարկել» բառի և «ուղղորդել» բառի հոմանիշների տարբեր հոլովաձևերը և համեմատել նախատեսված հոդվածների մեջ արտացոլված դիսպոզիցիաները հաճախորդից ստացված տվյալների հետ՝ պարզելու համար՝ արդյոք որևիցե մեկի արարքի մեջ առկա են համապատասխան հանցագործության հատկանիշներ, թե ոչ: Կամ օրինակ, եթե անձը դիմել է փաստաբանին՝ պնդելով, որ իրեն հայտնի են այնպիսի խախտումներ, որոնք հիմք են քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու համար, անհրաժեշտ է ՀՀ ընտրական օրենսգրքի մեջ որոնել «արդյունք», «քվեարկություն», «անվավեր», «ճանաչել» բառերի (դրանց տարբեր հոլովաձևերի) հնարավորինս միասնական համադրություն մեկ հոդվածի մեջ, և վերլուծելով սահմանված ընթացակարգը՝ գնահատել՝ արդյոք առկա են հիմքեր քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու համար, թե ոչ:

Նկարագրված գործողությունները կօգնեն փաստաբանին նաև կողմնորոշվել այն հարցում, թե արդյոք իրեն դիմած ֆիզիկական անձը կամ ի դեմս նրա հանդես եկող կազմակերպությունը հանդիսանում է այն իրավահարաբերության մասնակից, որը կարգավորում է համապատասխան որոշման, գործողության, անգործության բողոքարկման կամ վարչական, քրեական պատասխանատվության ենթարկելու կարգը, թե ոչ: Բանն այն է, որ հնարավոր է՝ ստացված փաստական տվյալները լինեն հիմք, օրինակ, որևիցե՝ որոշման վիճարկման համար, սակայն՝ այդ տվյալները փոխանցած անձը չունենա իրավունք՝ վիճարկելու տվյալ որոշումը: Վերջապես, պետք չէ բացառել, որ փաստա-

բանը կարող է ստանձնել ոչ թե գանգատվող, այլ պաշտպանվող կողմի շահերի պաշտպանությունը, կամ՝ պարզապես տրամադրել խորհրդատվություն այդպիսի անձանց (կեղծիքների մեջ մեղադրվող կուսակցություն, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ և այլն):

Հաճախորդին առաջնային խորհրդատվություն մատուցելիս առաջին հերթին անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ նորմատիվ իրավական ակտերին՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք (այսուհետ նաև՝ ՎԻՎՕ), ՀՀ Ընտրական օրենսգիրք (այսուհետ նաև՝ ԸՕ), ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք (այսուհետ նաև՝ ՎԴՕ), ՀՀ քրեական օրենսգիրք (այսուհետ նաև՝ ՔՕ), ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք (այսուհետ նաև՝ ՔԴՕ), «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք (այսուհետ՝ ՎՀՎՎ), «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենք (այսուհետ՝ ՍԴ): Իրագործելով նշված օրենսդրական ակտերի վերլուծություն՝ կարելի է եզրակացնել, թե փաստաբանի պոտենցիալ հաճախորդներից որոնք կարող են լինել համապատասխան իրավահարաբերությունների մասնակից, ինչպես նաև՝ առանձնացնել դրանցով սահմանվող ընթացակարգերը՝ ներկայացնելով դրանք համապարփակ կերպով: Սույն ուղեցույցի հաջորդ կետերն ու մասերը նվիրված են այդ հարցերի պարզաբանմանը:

1.2. Հաճախորդի կողմից ներկայացված փաստերի իրավական գնահատական

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը նախատեսում է վարչական պատասխանատվություն ՀՀ ընտրական իրավունքի դեմ ուղղված մի շարք արարքների համար: Դրանք նախատեսված են օրենսգրքի 40.1.-40.4.-րդ, 40.6.-40.9.-րդ, 40.11.-40.15.-րդ հոդվածներով: 40.5.-րդ, 40.10.-րդ հոդվածները կորցրել են իրենց ուժը և այլևս չեն գործում:

ՀՀ քրեական օրենսգիրքին իր հերթին նախատեսում է քրեական պատասխանատվություն ՀՀ ընտրական իրավունքի դեմ ուղղված մի շարք արարքների համար: Դրանք նախատեսված են 149-150-րդ, 152-154.2.-րդ, 154.4.- 154.9.-րդ հոդվածներով: 151-րդ, 154.3.-րդ հոդվածները կորցրել են իրենց ուժը և այլևս չեն գործում:

Փաստաբանին անհրաժեշտ է նախևառաջ պարզել՝ արդյոք հաճախորդի կողմից ներկայացված փաստերի մեջ առկա են նշված խախտումների հատկանիշներ, թե ոչ: Բնականաբար, փաստաբանը կաշկանդված չէ՝ վերլուծել ստացված տեղեկությունները՝ պարզելու համար՝ արդյոք առկա են որևիցե այլ խախտումների հատկանիշներ, թե ոչ: Այս փուլում անհրաժեշտ է հաշվի առնել, որ ՎԻՎՕ 9-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝

«Սույն օրենսգրքով նախատեսված իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն առաջանում է, եթե այդ խախտումները իրենց բնույթով քրեական պատասխանատվություն չեն

առաջացնում գործող օրենսդրությանը համապատասխան»:

Դա նշանակում է, որ եթե նույն արարքի համար նախատեսված է քրեական պատասխանատվություն, գործում են ՀՀ քրեական օրենսգրքով ամրագրված իրավունքի նորմերը:

Այն դեպքում, երբ իրագործված նախնական որակման արդյունքում պարզվում է, որ առկա են վարչական իրավախախտման հատկանիշներ, որոնք նախատեսված են վերը նշված հոդվածներով, փաստաբանի ծառայությունը կարող է ուղղված լինել հետևյալ անձանց շահերի պաշտպանությանը կամ խորհրդատվության տրամադրմանը՝

- տվյալ իրավախախտումը կատարած անձը (վարչական պատասխանատվության ենթարկվող կամ դեռևս չենթարկվող),
- ընտրություններին մասնակցող կուսակցություն,
- կուսակցությունների դաշինք,
- համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածու կամ այդ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպություն,
- քարոզչության կողմը՝ հանրաքվեի ժամանակ,
- իրավասու ընտրական հանձնաժողով:

Այն դեպքում, երբ իրագործված նախնական որակման արդյունքում պարզվում է, որ առկա են քրեաիրավական խախտման հատկանիշներ, որոնք նախատեսված են վերը նշված հոդվածներով, փաստաբանի ծառայությունը կարող է ուղղված լինել հետևյալ անձանց շահերի պաշտպանությանը կամ խորհրդատվության տրամադրմանը՝

- հանցագործության մասին հաղորդում ներկայացրած անձ,
- տվյալ հանցանքը կատարած անձ (կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ունեցող կամ դեռևս չունեցող),
- տուժող,
- վկա:

Հնարավոր են իրավիճակներ, երբ իրագործված նախնական որակման արդյունքում պարզվում է, որ առկա չեն վարչական կամ քրեական իրավախախտման հատկանիշներ, կամ բացի դրանից առկա են նաև հիմքեր համապատասխան որոշում, գործողություն, անգործություն, քվեարկության արդյունք վիճարկելու համար: Այդ դեպքում կիրառվում են համապատասխան իրավունքի նորմեր, որոնք նախատեսված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով, Վարչական դատավարության մասին ՀՀ օրենսգրքով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով և կարգավորում են վիճարկման կարգը: Այս դեպքերում փաստաբանի ծառայությունը կարող է ուղղված լինել հետևյալ անձանց շահերի պաշտպանությանը կամ խորհրդատվության տրամադրմանը՝

- յուրաքանչյուր ոք, ով գտնում է, որ խախտվել կամ կարող է խախտվել իր՝ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված սուբյեկտիվ ընտրական իրավունքը,
- վստահված անձը, եթե գտնում է, որ խախտվել է իր կամ իր վստահորդի՝ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքը,
- դիտորդը կամ այցելուն, եթե գտնում է, որ խախտվել է իր՝ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքը,

- զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը, եթե գտնում է, որ խախտվել է իր՝ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքը,
- ընտրություններին մասնակցող կուսակցության լիազոր ներկայացուցիչը, եթե գտնում է, որ խախտվել է իր կամ իր վստահորդ կուսակցության կամ կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի՝ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքը,
- ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 9-18-րդ մասերով նախատեսված հատկանիշներն ունեցող անձինք:

Ամփոփելով, յուրաքանչյուր դեպքում փաստաբանի խնդիրն է՝ տալ իրավական գնահատական հաճախորդի կողմից ներկայացված տվյալներին՝ վերը նշված ուղղություններով:

Մաս 2. ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

2.1. Ընտրական իրավունքի դեմ ուղղված հանցագործություններ

Ընտրական իրավահարաբերությունները կարգավորող իրավունքի նորմերի խախտմանն ուղղված հանցագործությունները ոտնահարում են քաղաքացու քաղաքական իրավունքները, որոնք նախատեսված են ՀՀ սահմանադրությամբ: Այդ հանցագործությունները նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ գլխի մեջ, որի վերնագիրն է՝ «Մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված հանցագործությունները»: Հայրենական մասնագետների հեղինակությամբ տպագրվել են մի շարք աշխատանքներ՝ ուղղված Քրեական օրենսգրքի հոդվածների մեկնաբանմանը: Օրինակ՝ «ԵՊՀ հրատարակչության»՝ Գ.Ս. Ղազինյանի խմբագրությամբ դասագիրքը՝ «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Հատուկ մաս» վերնագրով՝ մի քանի հրատարակություններով, «Աստղիկ հրատարակչության»՝ Ռ.Լ. Գևորգյանի և Ռ.Գ. Մելքոնյանի գրախոսմամբ աշխատանքը՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի մեկնաբանություններ» վերնագրով՝ 2004թ.-ի հրատարակությամբ և այլն: Այս աշխատանքները ներկայացնում են տվյալ հանցագործության հանցակազմի տարրերի՝ օբյեկտի, սուբյեկտի, օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի պարզաբանումը, որոնք գործնականում անհրաժեշտ են տարբեր մասնագետներին, այդ թվում՝ փաստաբաններին: Ստորև հակիրճ ներկայացվում են քաղաքական իրավունքների խախտմանն ուղղված հանցագործությունների սահմանումներն ու դրանց մեկնաբանությունները:

ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածը նախատեսում է քրեական պատասխանատվություն՝

Քաղաքացու ընտրական կամ հանրաքվեի իրավունքի ազատ իրականացմանը կամ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքին խոչընդոտելու, ինչպես նաև ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի կամ նախաձեռնող խմբի անդամի, թեկնածուի, այցելուի, լիազոր ներկայացուցչի, հանրաքվեի նախաձեռնող խմբի ներկայացուցչի, վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, տեխնիկական սարքավորումն սպասարկող անձի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու համար:

Օբյեկտը: Այս հանցագործությամբ անձը ոտնձգում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտրական կամ հանրաքվեի իրավունքի, ընտրական հանձնաժողովների աշխատանքների ու ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների ազատ իրականացման դեմ:

Օբյեկտիվ կոդ: Հանցագործություն է համարվում հոդվածի մեջ նշված երկրնորելի արարքներից առնվազն որևիցե մեկի կատարումը: Այդ արարքներից յուրաքանչյուրն, ըստ էության, հոդվածի մեջ նշված անձանցից որևիցե մեկի գործունեությանը խոչընդոտելն է: Մասնավորապես, այդ արարքներն են՝

- քաղաքացու ընտրական կամ հանրաքվեի իրավունքի ազատ իրականացմանը խոչընդոտելը,
- ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքները խոչընդոտելը,

- ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի անդամի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը,
- նախաձեռնող խմբի անդամի, թեկնածուի, այցելուի, լիազոր ներկայացուցչի, հանրաքվեի նախաձեռնող խմբի ներկայացուցչի, վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, տեխնիկական սարքավորումն սպասարկող անձի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը:

Ուստի, յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է բացահայտել՝ արդյոք առկա է խոչընդոտում, թե ոչ: Ընդհանուր վերցրած նշված բոլոր դեպքերում «խոչընդոտել» բառը մեկնաբանվում է իր առաջին իմաստով և նշանակում է ցանկացած եղանակով որոշակի արգելքներ ստեղծելը: Նկատի ունենալով՝ խոչընդոտելը կարող է ունենալ բազմաթիվ և բազմաբովանդակ դրսևորումներ, հոդվածով տրված չէ այս հասկացության սահմանումը, և տվյալ արարքի կատարման կոնկրետ դրսևորումը բացահայտելու համար՝ յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է մանրամասնորեն վերլուծել հոդվածի մեջ նշված սուբյեկտների համապատասխան իրավունքների, աշխատանքի և լիազորությունների վերաբերյալ նորմատիվ իրավական կարգավորումները՝ պարզելու համար՝ արդյոք տվյալ դեպքում այն, ինչի իրագործումը խոչընդոտվել է, եղել է հոդվածի մեջ նշված սուբյեկտների՝ օրենքով նախատեսված իրավունքի, լիազորության կամ աշխատանքի իրականացում, թե ոչ: Օրինակ, դիտորդների լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու դրսևորում կարող է լինել նրան ընտրությունների մասին տեղեկատվություն տրամադրելու հարցում մերժելը կամ նրա ընտրատարածք չթողնելը:

Խոչընդոտելը կարող է կատարվել ինչպես գործողությամբ, այնպես էլ անգործությամբ: Ընդ որում, այս հանցակազմը ձևական է, քանի որ հանցագործությունը համարվում է ավարտված խոչընդոտման պահից՝ անկախ նրանից որևիցե հետևանք առաջացել է, թե ոչ:

Սուբյեկտիվ կողմ: Նկատի ունենալով, որ հանցակազմը ձևական է՝ տվյալ հանցագործությունը կատարվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Այսինքն, վերը նկարագրված խոչընդոտումը կհամարվի տվյալ հոդվածով նախատեսված հանցագործություն, միայն եթե այդ արարքը կատարած անձը գիտակցել է, որ խոչընդոտում է նշված սուբյեկտների իրավունքների, լիազորությունների կամ աշխատանքի իրագործմանը:

Տվյալ հոդվածով նախատեսված արարքը կատարելու համար ֆիզիկական անձը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե նա մեղսունակ է և լրացել է նրա 16 տարեկանը՝ նախքան արարքը կատարելը:

Այս հանցագործությունն ունի առավել վտանգավոր տեսակներ, որոնք նախատեսված են նույն հոդվածի 2-րդ մասով: Մասնավորապես, առավել խիստ պատասխանատվություն են առաջացնում նույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքները, որոնք՝

- կատարվել են գույքին վնաս պատճառելով կամ պատճառելու սպառնալիքով,
- կատարվել են նյութապես շահագրգռելով,
- գուգորդվել են բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,
- կատարվել են պաշտոնեական դիրքն օգտագործելով,
- կատարվել են մի խումբ անձանց կողմից,

- զուգորդվել են անձին ազատությունից զրկելով:

ՀՀ քրեական օրենսգրքի 149.1-րդ հոդվածը նախատեսում է քրեական պատասխանատվություն՝

*նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն
կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրա-
ժարվելուն հարկադրելու համար:*

Օրյեկտը: Այս հանցագործությամբ անձը ոտնձգում է նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն իրագործելու իրավունքի իրագործման դեմ:

Օրյեկտիվ կողմ: Հանցագործություն է համարվում հոդվածի մեջ նշված երկընտրելի արարքներից առնվազն որևիցե մեկի կատարումը: Մասնավորապես, այդ արարքներն են՝

- նախընտրական քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելը,
- հանրաքվեի քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելը:

Ուստի, յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է բացահայտել՝ արդյոք առկա է հարկադրանք, թե ոչ: «Հարկադրանք» բառը նշված բոլոր դեպքերում ընկալվում է իր առաջին իմաստով, սակայն՝ որոշակի քրեափրավական մեկնաբանությամբ: Մասնավորապես, հարկադրելը շանտաժն է, սպառնալն է կամ անձի կախվածությունն օգտագործելն է, որոնց նպատակն այն է, որ դրանց արդյունքում նշված քարոզչությունը կատարելու իրավունք ունեցող անձը՝ իր ցանկությանը հակառակ՝ կատարի այդ քարոզչությունը կամ հրաժարվի այն կատարելուց: Ընդ որում, միևնույն է՝ սպառնալիքն ում է ուղղված՝ քարոզչությունը կատարելու իրավունք ունեցող անձին, թե ոչ: Սպառնալիքը կարող է վերաբերել արատավորորոշ տեղեկությունների տարածմանը,

հրապարակմանը (ընդ որում՝ լիովին կարևոր չէ՝ այդ տեղեկություններն համապատասխանում են իրականությանը, թե ոչ), գույք ոչնչացնելուն կամ վնասելուն, բռնության գործադրմանը: Անհրաժեշտ է, որ քարոզչություն կատարելու իրավունք ունեցող անձը գիտակցի, որ այն իրական է և անխուսափելի: Բացի դրանից, միևնույն է՝ ով է գտնվում հանցագործից կախվածության մեջ՝ քարոզչությունը կատարելու իրավունք ունեցող անձը, թե ոչ: Վերջապես, հարկադրելը կարող է դրսևորվել անձի ֆիզիոլոգիական կամ հոգեկան առողջության վրա ազդելու միջոցով:

Այս հանցակազմը ձևական է, քանի որ հանցագործությունը համարվում է ավարտված հարկադրելու պահից՝ անկախ նրանից հանցավորն հասել է իր նպատակին, թե ոչ, այսինքն՝ անկախ նրանից՝ անձն առանց իր ցանկության կատարել է քարոզչություն կամ հրաժարվել է դրա կատարումից, թե ոչ: Տվյալ հանցագործության փորձը հնարավոր է այն դեպքում, երբ հանցավորը կարծում է, թե տվյալ անձն իրավունք ունի կատարել նշված քարոզչությունը, սակայն իրականում հանցավորը սխալվում է:

Սուբյեկտիվ կողմ: Նկատի ունենալով, որ հանցակազմը ձևական է՝ տվյալ հանցագործությունը կատարվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Այսինքն, վերը նկարագրված հարկադրելը կհամարվի տվյալ հոդվածով նախատեսված հանցագործություն, միայն եթե այդ արարքը կատարած անձը գիտակցել է, որ հարկադրում է քարոզչություն կատարելու իրավունք ունեցող անձին՝ կատարել քարոզչություն կամ հրաժարվել դրա կատարումից:

Տվյալ հոդվածով նախատեսված արարքը կատարելու համար ֆիզիկական անձը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե նա մեղսունակ է և լրացել է նրա 16 տարեկանը՝ նախքան արարքը կատարելը:

Այս հանցագործությունն ունի առավել վտանգավոր տեսակներ, որոնք նախատեսված են նույն հոդվածի 2-րդ մասով: Մասնավորապես, առավել խիստ պատասխանատվություն են առաջացնում նույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքները, որոնք՝

- կատարվել են ծառայողական կամ այլ կախվածությունն օգտագործելով,
- կատարվել են պաշտոնական դիրքն օգտագործելով,
- գուցորդվել են բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,
- կատարվել են մի խումբ անձանց կողմից,
- գուցորդվել են անձին ազատությունից զրկելով:

ՀՀ քրեական օրենսգրքի 150-րդ հոդվածը նախատեսում է քրեական պատասխանատվություն՝

Հանրաքվեի կամ ընտրությունների ընթացքում ձայներն ակնհայտ սխալ հաշվելու կամ ընտրությունների արդյունքները, այդ թվում՝ արձանագրությունները, դրանց պատճենները, այլ ընտրական փաստաթղթերը և դրանց քաղվածքները ակնհայտ սխալ տվյալներով հաստատելու, համակարգչում ակնհայտ սխալ տվյալներ մուտքագրելու, մուտքագրված տվյալները փոփոխելու, ընտրողի քվեաթերթիկը կամ քվեարկության ծրարն անվավեր կամ չսահմանված նմուշի դարձնելու, ինչպես նաև որևէ

այլ եղանակով ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելու կամ այդ նպատակով ընտրական փաստաթղթերը վերադաս ընտրական մարմիններին սահմանված ժամկետում չներկայացնելու համար:

Օբյեկտը: Տվյալ հանցագործությամբ անձը ոտնձգում է ընտրությունների և հանրաքվեի անցկացման կարգի դեմ: Հանցագործության առարկան հողվածի մեջ նշված ընտրական փաստաթղթերն են, ինչպես նաև քվեատուփն ու համապատասխան համակարգչային տեղեկատվությունը:

Օբյեկտիվ կողմ: Հանցագործություն է համարվում հողվածի մեջ նշված երկընտրելի արարքներից առնվազն որևիցե մեկի կատարումը: Այդ արարքներն, ըստ էության, ընտրությունների կամ քվեարկության արդյունքներ կեղծելու դրսևորումներն են կամ դրան ուղղված գործողությունը: Մասնավորապես, այդ արարքներն են՝

- ձայներն ակնհայտ սխալ հաշվելը,
- ընտրությունների արդյունքները, այդ թվում՝ արձանագրությունները, դրանց պատճենները, այլ ընտրական փաստաթղթերը և դրանց քաղվածքներն ակնհայտ սխալ տվյալներով հաստատելը,
- համակարգչում ակնհայտ սխալ տվյալներ մուտքագրելը կամ մուտքագրված տվյալները փոփոխելը,
- ընտրողի քվեաթերթիկը կամ քվեարկության ծրարն անվավեր կամ չսահմանված նմուշի դարձնելը,
- որևէ այլ եղանակով ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը,

- ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելու նպատակով ընտրական փաստաթղթերը վերադաս ընտրական մարմիններին սահմանված ժամկետում չներկայացնելը:

Ձայներն ակնհայտ սխալ հաշվելը նշանակում է քվեարկության արդյունքների դիտավորյալ աղավաղում, որն առաջ է բերում ձայների՝ իրականությանը չհամապատասխանող ավելացում կամ պակասեցում:

Ընտրությունների արդյունքներն, այդ թվում՝ արձանագրությունները, դրանց պատճենները, այլ ընտրական փաստաթղթերը և դրանց քաղվածքներն ակնհայտ սխալ տվյալներով հաստատելը արտահայտվում է նրա մեջ, որ անձը գիտակցում է՝ տվյալ փաստաթղթի մեջ տվյալները սխալ են, սակայն հաստատում է դրանք:

Քննարկվող հոդվածի իմաստով համակարգչում ակնհայտ սխալ տվյալներ մուտքագրել կամ մուտքագրված տվյալները փոփոխել ասելով՝ պետք է հասկանալ այն դեպքերը, երբ խոսքը այնպիսի տվյալների մասին է, որոնք մուտքագրելու կամ փոփոխելու դեպքում ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կարող են կեղծվել: Հակառակ պարագայում արարքը չի կարող որակվել ՔՕ հոդված 150-ով:

Ընտրողի քվեաթերթիկը կամ քվեարկության ծրարն անվավեր կամ չսահմանված նմուշի դարձնելու դեպքում անձը քվեաթերթիկը կամ ծրարը ենթարկում է այնպիսի ազդեցության, որի արդյունքում բացակայում են օրենքով սահմանված հատկանիշները, և դրանք դառնում են անվավեր կամ տարբերվում են սահմանված նմուշից:

Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելու այլ եղանակներ կարող են համարվել, օրինակ, քվեարկության արդյունքների վրա ազդելու նպատակով պահանջվածից ավելի տպագրված և այս կամ այն թեկնածուի օգտին նախապես քվեարկված քվեաթերթիկներ լցունելը, քվեաթերթիկներ թաքցնելը և այլն:

Ընտրական փաստաթղթերը վերադաս ընտրական մարմիններին սահմանված ժամկետում չներկայացնելը քրեական պատասխանատվություն է առաջացնում, եթե դա կատարվել է ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելու նպատակով:

Այս հանցակազմը ձևական է. հանցագործությունն ավարտված է համարվում հանրաքվեի կամ ընտրությունների արդյունքները որևէ եղանակով կեղծելու կամ այդ նպատակով ընտրական փաստաթղթերը վերադաս ընտրական մարմիններին սահմանված ժամկետում չներկայացնելու պահից: Նշված արդյունքները կեղծելու համար որոշակի պայմաններ ստեղծելը, միջոցներ ձեռնարկելը, ինչը հետագայում խափանվել է, որակվում է որպես հանրաքվեի կամ ընտրությունների արդյունքները կեղծելու նախապատրաստություն:

Սուբյեկտիվ կողմ: Քննարկվող հանցագործությունը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Այսինքն, հանցավորը գիտակցում է, որ իր գործողություններով կեղծվում են ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կամ ուղղված են դրան՝ ընտրական փաստաթղթերը վերադաս ընտրական մարմիններին սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում:

Հանցագործության սուբյեկտը հատուկ է: Տեղամասային, Տարածքային կամ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ հանդիսացող յուրաքանչյուր անձ: Այլ անձանց գործողությունները, ովքեր այս կամ այն կերպ աջակցել են ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելուն, կարող են որակվել որպես ՔՕ հոդված 150-ով նախատեսված հանցագործության օժանդակություն:

Այս հանցագործությունն ունի առավել վտանգավոր տեսակ, որը նախատեսված է նույն հոդվածի 2-րդ մասով: Մասնավորապես, առավել խիստ պատասխանատվություն են առաջացնում նույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից:

ՀՀ քրեական օրենսգրքի 152-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է քրեական պատասխանատվություն՝

Ընտրողների ցուցակները կազմելու համար պատասխանատու պաշտոնատար անձի կողմից ընտրողների ցուցակները քաղաքացիներին կամ կուսակցություններին տրամադրելու համար սահմանված կարգը խախտելու, դրանք չտրամադրելու կամ սահմանված կարգով դրանք չհրապարակելու համար:

Այս հոդվածի 3-րդ պարբերությամբ նախատեսված է մեկ այլ հանցագործություն, որի համար սահմանված են առավել խիստ պատժատեսակներ: Մասնավորապես, առավել խիստ պատասխանատվություն է առաջացնում

Ընտրողների ցուցակները կազմելու համար պատասխանատու պաշտոնատար անձի կողմից ընտ-

*ըտղների ցուցակները կազմելու համար սահմանված
կարգը խախտելով կեղծիքներ կատարելը:*

Օբյեկտը: Այս հանցագործություններով անձը ոտնձգում է ընտրողների ցուցակները քաղաքացիներին կամ կուսակցություններին տրամադրելու կամ դրանք կազմելու կամ հրապարակելու համար սահմանված կարգի դեմ: Հանցագործության առարկան ընտրական իրավունք ունեցող ՀՀ քաղաքացիների ցուցակն է:

Օբյեկտիվ կողմ: Հանցագործությունն է համարվում հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված երկընտրելի արարքներից առնվազն որևիցե մեկի, ինչպես նաև 3-րդ պարբերությամբ նախատեսված արարքի կատարումը: Մասնավորապես, այդ արարքներն են՝

- ընտրողների ցուցակները քաղաքացիներին և կուսակցություններին տրամադրելու համար սահմանված կարգը խախտելով,
- ընտրողների ցուցակները քաղաքացիներին և կուսակցություններին չտրամադրելը,
- ընտրողների ցուցակները սահմանված կարգով չհրապարակելը,
- ընտրողների ցուցակները կազմելու համար սահմանված կարգը խախտելով կեղծիքներ կատարելը:

Ընտրողների ցուցակները կազմելու, վարելու, քաղաքացիներին ու կուսակցություններին տրամադրելու, ինչպես նաև դրանք հրապարակելու կարգն ու պայմանները, դրանք կազմելու համար պատասխանատու անձանց շրջանակը նախատեսված են ՀՀ ընտրական օրենսգրքով:

Այս հանցագործությունների հանցակազմը ձևական է. դրանք ավարտված են համարվում ընտրողների ցուցակները տրամադրելու կարգը խախտելու, չտրամադրելու կամ սահմանված կարգով չհրապարակելու, ինչպես նաև ցուցակի մեջ կեղծիքներ կատարելու պահից՝ անկախ որևէ հետևանքից:

Այս հոդվածի 3-րդ պարբերությամբ նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմն ունի արարքի կատարման եղանակ: Մասնավորապես, արարքը ենթակա է որակման այս հոդվածով, միայն եթե կեղծիքները կատարվել են ընտրողների ցուցակները կազմելու համար սահմանված կարգը խախտելով:

Սուբյեկտիվ կողմ: Հանցագործությունը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Այսինքն, տվյալ արարքը հանցագործություն է, եթե այն կատարած անձը գիտակցել է, որ խախտում է ընտրողների ցուցակների տրամադրման կարգը, չի տրամադրում այն կամ խախտել է այդ ցուցակների հրապարակման կարգը կամ խախտելով այդ ցուցակների կազմման կարգը կատարել է կեղծիքներ:

Այս հանցագործությունների սուբյեկտը հատուկ է, այն է՝ ընտրողների ցուցակներ կազմելու համար պատասխանատու պաշտոնատար անձը: Ուստի անձը ենթակա է քրեական պատասխանատվության այս արարքներից որևիցե մեկը կատարելու համար, եթե նա այդպիսի պաշտոնատար անձ է:

ՀՀ քրեական օրենսգրքի 153-րդ հոդվածը նախատեսում է քրեական պատասխանատվություն՝

Կեղծ տվյալներ հայտնելու, կեղծ փաստաթուղթներ կայացնելու կամ որևէ այլ եղանակով մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելու համար:

Օբյեկտը: Այս հանցագործությամբ անձը ոսնձգում է քվեարկության՝ օրենքով սահմանված կարգի դեմ:

Օբյեկտիվ կողմ: Հանցագործություն է մեկից ավել անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը, որը կատարվել է հոդվածի մեջ նշված եղանակներից որևիցե մեկով: Մասնավորապես, այդ եղանակներն են՝

- կեղծ տվյալներ հայտնելը,
- կեղծ փաստաթուղթ ներկայացնելը,
- որևէ այլ եղանակ:

Կեղծ տվյալներ հայտնելը համարվում է տվյալ հանցագործության եղանակ, երբ հանցավորը իրականությանը չհամապատասխանող, աղճատված տեղեկություններ հաղորդելով, մոլորության մեջ է գցում համապատասխան պատասխանատու անձին (օրինակ՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի ներկայացուցչին)՝ քվեարկությանը մասնակցելու նպատակով:

Կեղծ փաստաթուղթ ներկայացնելը ևս հանդիսանում է քննարկվող հանցագործության եղանակ, եթե դա կատարվում է քվեարկությանը մասնակցելու համար: Օրինակ, երբ անձը հաստատող կեղծ փաստաթուղթ ներկայացնելով՝ հանցավորը հանդես է գալիս տվյալ տեղամասային ընտրատարածքում ընտրելու իրավունք ունեցող մեկ ուրիշ անձի անվան տակ:

Մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելու այլ եղանակներ ասելով՝ հասկացվում է կեղծ տվյալի հայտնում կամ կեղծ փաստաթղթի ներկայացում չհանդիսացող ցանկացած այլ եղանակ:

ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 16-18-րդ մասերը վերաբերում են այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ դիմումներին:

Պետք է նշել, որ ներկայիս տեխնիկական հագեցվածության պայմաններում, երբ կիրառվում է քաղաքացու նույնականացում՝ մատնահետքի միջոցով, առավել հավանական է, որ մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը կարող է տեղի ունենալ համապատասխան պատասխանատու անձանց աջակցությամբ: Վերջիններիս գործողությունները համապատասխան հատկանիշների առկայության դեպքում պետք է որակվեն որպես քննարկվող հանցագործության օժանդակություն, իսկ եթե օժանդակությունն իրագործվել է պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնական լիազորությունները չարաշահելով, վերջինիս արարքը լրացուցիչ պետք է որակվի ՔՕ հոդված 308-ով:

Այս հանցակազմը ձևական է. հանցագործությունն ավարտված է համարվում մեկից ավելի (առնվազն երկրորդ) անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելու պահից:

Սուբյեկտիվ կողմ: Հանցագործությունը կատարվում է միայն ուղղակի դիտավորությամբ. հանցավորը պետք է գիտակցի մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելու հանգամանքը՝ համապատասխան եղանակով:

Տվյալ հոդվածով նախատեսված արարքը կատարելու համար ֆիզիկական անձը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե նա մեղսունակ է և լրացել է նրա 16 տարեկանը՝ նախքան այդ արարքը կատարելը:

Այս հանցագործությունն ունի առավել վտանգավոր տեսակ, որը նախատեսված է նույն հոդվածի 2-րդ մասով: Մասնավորապես, առավել խիստ պատասխանատվություն է առաջացնում նույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը

կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից:

ՀՀ քրեական օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասը նախատեսում է քրեական պատասխանատվություն՝

Քվեարկության գաղտնիությունը խախտելու նպատակով ընտրողին քվեարկության արդյունքը հայտնելուն հարկադրելու, քվեարկության արդյունքը բացահայտելու նպատակով քվեարկած քվեաթերթիկը ստուգելը, քվեարկության խցիկ (սենյակ) մուտք գործելու, ինչպես նաև քվեարկության գաղտնիությունն այլ կերպ խախտելու համար:

Օրյեկտը: Այս հանցագործությամբ անձը ոտնձգում է հանրաքվեի կամ ընտրությունների անցկացման ընթացքում քվեարկության գաղտնիության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների դեմ:

Օրյեկտիվ կողմ: Օրյեկտիվ կողմից այս հանցագործությունը բնութագրվում է քվեարկության գաղտնիությունը խախտելուն ուղղված գործողություններով, որոնք դրսևորվում են՝

- ընտրողին քվեարկության արդյունքը հայտնելուն հարկադրելը,
- քվեարկած քվեաթերթիկը ստուգելը,
- քվեարկության խցիկ (սենյակ) մուտք գործելը,
- քվեարկության գաղտնիությունն այլ կերպ խախտելը (օրինակ՝ քվեարկության խցիկում տեսաձայնագրման սարքավորումներ տեղադրելով և այլն):

Քվեարկության գաղտնիության խախտումը նշանակում է այնպիսի իրադրության ստեղծում, երբ որևէ այլ անձ հնարավորություն է ունենում հսկողություն իրականացնելու քաղաքացի-

ների կամքի ազատ արտահայտման նկատմամբ: Օրինակ, քվեարկության խցիկների բացակայությունը և այլն:

Ընտրողին քվեարկության արդյունքը հայտնելուն հարկադրելու դեպքում «հարկադրել» բառը մեկնաբանվում է նույնկերպ, ինչ ԲՕ 149.1-րդ հոդվածի դեպքում:

Այս հանցակազմը ձևական է. հանցագործությունն ավարտված է համարվում քվեարկության գաղտնիությունը որևէ եղանակով խախտելու պահից:

Սուբյեկտիվ կողմ: Հանցագործությունը կատարվում է միայն ուղղակի դիտավորությամբ. հանցավորը պետք է գիտակցի, որ թվարկված եղանակներից որևիցե մեկով խախտում է քվեարկության գաղտնիությունը: Ընդ որում, քննարկվող հանցակազմն առկա է միայն այն դեպքերում, երբ հոդվածի 1-ին մասի մեջ նախատեսված գործողությունները կատարվում են հենց քվեարկության գաղտնիությունը խախտելու նպատակով:

Տվյալ հոդվածով նախատեսված արարքը կատարելու համար ֆիզիկական անձը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե նա մեղսունակ է և լրացել է նրա 16 տարեկանը՝ նախքան այդ արարքը կատարելը:

Այս հոդվածի 2-րդ մասով նախատեսված է մեկ այլ հանցագործություն: Մասնավորապես 154-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է քրեական պատասխանատվություն՝

Քվեարկողի կողմից բաց՝ երրորդ անձանց (բացառությամբ քվեարկողին օգնող անձի) համար քվեարկության արդյունքը տեսանելի ձևով քվեարկելու, ինչպես նաև շահադիտական նպատակով քվեարկության գաղտնիությունը քվեարկության արդյունքը բացահայտող փաստաթղթի լուսանկարահանմամբ

կամ տեսաձայնագրմամբ ստացված տեղեկատվության հրապարակման միջոցով խախտելու համար:

Օբյեկտը նույնն է, ինչ 1-ին մասով նախատեսված հանցագործության օբյեկտն է:

Օբյեկտիվ կողմ: Օբյեկտիվ կողմից այս հանցագործությունը բնութագրվում է երկու տարբեր արարքներով, բացի դրանիք՝ երկու արարքի համար նախատեսված են տարբեր կատարման եղանակներ, դրանք են՝

- քվեարկելը՝ քվեարկողի կողմից բաց՝ երրորդ անձանց (բացառությամբ քվեարկողին օգնող անձի) համար քվեարկության արդյունքը տեսանելի ձևով,
- քվեարկության գաղտնիությունը խախտելը՝ քվեարկության արդյունքը բացահայտող փաստաթղթի լուսանկարահանմամբ կամ տեսաձայնագրմամբ ստացված տեղեկատվության հրապարակման միջոցով:

Այս հանցակազմը ձևական է. հանցագործությունն ավարտված է համարվում քվեարկության գաղտնիությունը նշված եղանակով խախտելու, ինչպես նաև նշված եղանակով քվեարկելու պահից:

Սուբյեկտիվ կողմ: Հանցագործությունը կատարվում է միայն ուղղակի դիտավորությամբ. հանցավորը պետք է գիտակցի, որ քվեարկում է նշված եղանակով, ինչպես նաև՝ խախտում է քվեարկության գաղտնիությունը՝ դարձյալ նշված եղանակով: Ընդ որում, քննարկվող հանցակազմն առկա է միայն այն դեպքերում, երբ քվեարկության գաղտնիությունը խախտվում է շահադիտական նպատակով:

Տվյալ հոդվածով նախատեսված արարքը կատարելու համար ֆիզիկական անձը ենթակա է քրեական պատասխանատվու-

թյան, եթե նա մեղսունակ է և լրացել է նրա 16 տարեկանը՝ նախ-
քան այդ արարքը կատարելը:

ՀՀ քրեական օրենսգրքի 154¹-րդ հոդվածի առաջին մասը նա-
խատեսում է քրեական պատասխանատվություն՝

*Անձնական դրդումներով կամ խմբային շահերից
ելնելով՝ կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ
քվեարկության ծրարներ, դրոշմանիշեր, կտրոններ
պատրաստելը կամ ակնհայտ կեղծ քվեաթերթիկներ
կամ քվեարկության ծրարներ, դրոշմանիշեր, կտրոն-
ներ հանձնելու կամ այլ եղանակով իրացնելու հա-
մար:*

Օբյեկտը: Այս հանցագործությամբ անձը ոտնձգում է քվեա-
թերթիկների, քվեարկության ծրարների, դրոշմանիշերի, կտրոն-
ների պատրաստման և դրանց շրջանառության հետ կապված
հասարակական հարաբերությունների դեմ, որոնք կարգավոր-
ված են ՀՀ ընտրական օրենսդրությամբ: Այս հանցագործության
առարկաներն են քվեաթերթիկները, քվեարկության ծրարները,
դրոշմանիշերը, կտրոնները:

Օբյեկտիվ կողմ: Օբյեկտիվ կողմից այս հանցագործությունը
բնութագրվում է մի քանի այլընտրանքային արարքներով,
դրանք են՝

- կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության
ծրարներ, դրոշմանիշեր, կտրոններ պատրաստելը,
- ակնհայտ կեղծ քվեաթերթիկներ կամ քվեարկության
ծրարներ, դրոշմանիշեր, կտրոններ հանձնելու կամ այլ
եղանակով իրացնելու:

Կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության
ծրարներ, դրոշմանիշեր, կտրոններ պատրաստել ասելով՝

պետք է հասկանալ դրանց լրիվ կամ մասնակի կեղծումը: Ընդ որում, քննարկվող հոդվածի իմաստով պատրաստել է համարվում ոչ միայն այդ առարկաների որևէ ռեկվիզիտ փոխելը, այլև նախատեսվածից ավել թողարկելը: Օրինակ, երբ տպարանի աշխատակիցը տպագրում է նախատեսված թվից ավելի քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ, հետագայում դրանք իրացնելու նպատակով:

Կեղծ քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ հանձնելը նշանակում է մեկ ուրիշին դրանք փոխանցել, տրամադրել, իսկ իրացնելու այլ եղանակ է համարվում հանձնելուց բացի ցանկացած այլ ձևով դրանք շրջանառության մեջ դնելը: Օրինակ, որևէ թեկնածուի կողմնակիցներին վաճառելը կամ նվիրելը և այլն: Ընդ որում, այսպիսի առարկաներ հանձնելով կամ որևէ այլ ձևով դրանք իրացնելով կարող է զբաղվել ինչպես պատրաստողը, այնպես էլ այլ անձինք: Արարքի քրեաիրավական որակման առումով դա որևէ նշանակություն չունի:

Այս հանցակազմը ձևական է. հանցագործությունն ավարտված է համարվում նշված կեղծ առարկաները պատրաստելու կամ դրանք որևիցե եղանակով իրացնելու պահից:

Սուբյեկտիվ կողմ: Հանցագործությունը կատարվում է միայն ուղղակի դիտավորությամբ. հանցավորը պետք է գիտակցի, որ պատրաստում է հոդվածի մեջ նշված կեղծ առարկաներից առնվազն որևիցե մեկը, կամ դրանք իրացնում է որևիցե եղանակով: Ամենակարևորը, հանցակազմն առկա է, բացառապես միայն եթե այդ արարքները կատարվել են անձնական դրդումներով կամ խմբային շահերից ելնելով:

Տվյալ հոդվածով նախատեսված արարքը կատարելու համար ֆիզիկական անձը ենթակա է քրեական պատասխանատվու-

թյան, եթե նա մեղսունակ է և լրացել է նրա 16 տարեկանը՝ նախ-
քան այդ արարքը կատարելը:

Այս հանցագործությունն ունի առավել վտանգավոր տեսակ,
որը նախատեսված է նույն հոդվածի 2-րդ մասով: Մասնավորա-
պես, առավել խիստ պատասխանատվություն է առաջացնում
նույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը
կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայ-
նությամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի 154.2-րդ հոդվածի առաջին մասը
նախատեսում է քրեական պատասխանատվություն՝

*Թեկնածուներից, կուսակցություններից (կուսակ-
ցությունների դաշինքներից), հանրաքվեի քարոզչա-
կան նախաձեռնություններից որևէ մեկի օգտին
կողմ կամ դեմ քվեարկելու կամ ընտրություններին
մասնակցելու կամ ընտրություններին մասնակցե-
լուց հրաժարվելու կամ մեկից ավելի անգամ քվեար-
կելու կամ այլ անձի փոխարեն քվեարկելու պայմա-
նով թեկնածուներից, կուսակցություններից (կու-
սակցությունների դաշինքներից), հանրաքվեի քա-
րոզչական նախաձեռնություններից անձամբ կամ
միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար կա-
շառք ստանալու, այսինքն՝ դրամ, գույք, գույքի
նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ
առավելություն ստանալու կամ պահանջելու հա-
մար:*

Օբյեկտը: Այս հանցագործությամբ անձը ոտնձգում է քվեար-
կության անցկացման ապահովմանն ուղղված հասարակական
հարաբերությունների դեմ:

Օբյեկտիվ կողմ: Այս հանցագործության արարքն է հողվածի 1-ին մասի մեջ նշված պայմանով հողվածի մեջ նշված անձանցից անձամբ կամ միջոցորդի միջոցով իր կամ այլ անձի համար կաշառք ստանալը: Պայմանն է՝

- Թեկնածուներից, կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից), հանրաքվեի քարոզչական նախաձեռնություններից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու կամ ընտրություններին մասնակցելու կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու կամ մեկից ավելի անգամ քվեարկելու կամ այլ անձի փոխարեն քվեարկելը:

Նշված անձինք են՝

- թեկնածուները, կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները), հանրաքվեի քարոզչական նախաձեռնությունները:

Կաշառք ստանալն է՝

- դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն ստանալը կամ պահանջելը:

Այս հանցակազմը ձևական է. հանցագործությունն ավարտված է համարվում նշված պայմանով, եղանակով և անձանցից իր կամ այլ անձի համար նշված գույքը կամ առավելությունը պահանջելու կամ ստանալու պահից: Պահանջելը կարող է դրսևորվել ցանկացած եղանակով, որն հնարավորություն է ընձեռում պահանջ ներկայացնողին և դրա հասցեատիրոջն ընկալել դրա բովանդակությունը: Այն դեպքում երբ հանցավորը գիտակցում է, որ ներկայացրել է նման պահանջ, սակայն այն եղել է անհասկանալի պահանջի հասցեատիրոջը, հանցագործությունը միևնույն է առկա է՝ սակայն հանցափորձի տեսքով:

Սուբյեկտիվ կողմ: Հանցագործությունը կատարվում է միայն ուղղակի դիտավորությամբ. հանցավորը պետք է գիտակցի, որ պահանջում կամ ստանում է նշված գույքը կամ որևէ այլ առավելությունը իր կամ այլ անձի համար՝ նշված պայմանով, եղանակով և անձանցից:

Սուբյեկտ: Տվյալ հոդվածով նախատեսված արարքը կատարելու համար ֆիզիկական անձը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե նա ունի քվեարկելու իրավունք: Եթե անձը չունի նման իրավունք, սակայն կատարում է հոդվածով նախատեսված արարքը, առկա է խարդախություն՝ այլ հատկանիշների առկայության դեպքում:

ՀՀ քրեական օրենսգրքի 154.2-րդ հոդվածի երկրորդ մասը նախատեսում է քրեական պատասխանատվություն՝

Թեկնածուներից, կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից), հանրաքվեի քարոզչական նախաձեռնություններից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու կամ ընտրություններին մասնակցելու կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու կամ մեկից ավելի անգամ քվեարկելու կամ այլ անձի փոխարեն քվեարկելու համար ընտրողին անձամբ կամ միջնորդի միջոցով ընտրողի կամ այլ անձի համար կաշառք տալու, այսինքն՝ դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն առաջարկելու, խոստանալու կամ տրամադրելու համար:

Օբյեկտը: Այս հանցագործությամբ անձը ոտնձգում է քվեարկության անցկացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների դեմ:

Օբյեկտիվ կողմ: Այս հանցագործության արարքն է հողվածի 2-րդ մասի մեջ նշված պայմանով ընտրողին անձամբ կամ միջնորդի միջոցով ընտրողի կամ այլ անձի համար կաշառք տալը: Պայմանն է՝

- Թեկնածուներից, կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից), հանրաքվեի քարոզչական նախաձեռնություններից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու կամ ընտրություններին մասնակցելու կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու կամ մեկից ավելի անգամ քվեարկելու կամ այլ անձի փոխարեն քվեարկելը:

Կաշառք տալն է՝

- դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն առաջարկելը, խոստանալը կամ տրամադրելը:

Այս հանցակազմը ձևական է. հանցագործությունն ավարտված է համարվում ընտրողին նշված պայմանով, եղանակով ընտրողի կամ այլ անձի համար նշված գույքը կամ որևէ այլ առավելությունն առաջարկելու, խոստանալու կամ տրամադրելու պահից: Առաջարկելը կամ խոստանալը կարող է դրսևորվել ցանկացած եղանակով, որն հնարավորություն է ընձեռում առաջարկ կամ խոստում ներկայացնողին և դրա հասցեատիրոջն ընկալել դրա բովանդակությունը: Այն դեպքում երբ հանցավորը գիտակցում է, որ ներկայացրել է նման առաջարկ կամ խոստում, սակայն այն եղել է անհասկանալի դրա հասցեատիրոջը, հանցագործությունը միևնույն է առկա է՝ սակայն հանցափորձի տեսքով:

Սուբյեկտիվ կողմ: Հանցագործությունը կատարվում է միայն ուղղակի դիտավորությամբ. հանցավորը պետք է գիտակցի, որ առաջարկում, խոստանում կամ տրամադրում է ընտրողին նշված գույքը կամ որևէ այլ առավելությունը՝ ընտրողի կամ այլ անձի համար՝ նշված պայմանով, եղանակով:

Սուբյեկտն ընդհանուր է: Տվյալ հոդվածով նախատեսված արարքը կատարելու համար ֆիզիկական անձը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե նա մեղսունակ է և լրացել է նրա 16 տարեկանը՝ նախքան հանցանքը կատարելը:

ՀՀ քրեական օրենսգրքի 154.2-րդ հոդվածի երրորդ մասը նախատեսում է քրեական պատասխանատվություն՝

Ընտրողին թեկնածուներից, կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից), հանրաքվեի քարոզչական նախաձեռնություններից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելուն, ընտրություններին մասնակցելուն կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելուն կամ մեկից ավելի անգամ քվեարկելուն կամ այլ անձի փոխարեն քվեարկելուն հարկադրելու համար, որը կատարվել է գույքին վնաս պատճառելով կամ գույքին վնաս պատճառելու սպառնալիքով, ծառայողական կամ այլ կախվածությունն օգտագործելով, բռնությամբ կամ բռնություն գործադրելու սպառնալիքով:

Օրբեկտը: Այս հանցագործությամբ անձը ոտնձգում է քվեարկության անցկացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների դեմ:

Օրբեկտիվ կողմ: Այս հանցագործության արարքն է ընտրողին հոդվածի 3-րդ մասի մեջ նշված գործողություններից որևիցե մե-

կին հարկադրելը՝ նշված եղանակներից որևիցե մեկով: Գործողություններն են՝

- թեկնածուներից, կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից), հանրաքվեի քարոզչական նախաձեռնություններից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելը,
- ընտրություններին մասնակցելը կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելը
- կամ մեկից ավելի անգամ քվեարկելը կամ այլ անձի փոխարեն քվեարկելը

Եղանակներն են՝

- գույքին վնաս պատճառելը կամ դրա սպառնալիքը,
- ծառայողական կամ այլ կախվածությունն օգտագործելը,
- բռնությամբ կամ բռնություն գործադրելու սպառնալիքը:

Այս հանցակազմը ձևական է. հանցագործությունն ավարտված է համարվում նշված եղանակով ընտրողին նշված գործողություններից որևիցե մեկին հարկադրելու պահից՝ անկախ նրանից հանցավորն հասել է իր նպատակին, թե ոչ: Ընդ որում, հարկադրել բառն ընկալվում է նույնկերպ, ինչ 149.1-րդ հոդվածի դեպքում, սակայն պետք է նկատի ունենալ, որ այս հոդվածով կարող է որակվել հարկադրելու այն դրսևորումը, որը կատարվել է հոդվածի մեջ նշված եղանակներից որևիցե մեկով:

Սուբյեկտիվ կողմ: Հանցագործությունը կատարվում է միայն ուղղակի դիտավորությամբ. հանցավորը պետք է գիտակցի, որ ընտրողին հարկադրում է նշված գործողություններից որևիցե մեկին նշված եղանակներից որևիցե մեկով:

Սուբյեկտն ընդհանուր է: Տվյալ հոդվածով նախատեսված արարքը կատարելու համար ֆիզիկական անձը ենթակա է քրեա-

կան պատասխանատվության, եթե նա մեղսունակ է և լրացել է նրա 16 տարեկանը՝ նախքան հանցանքը կատարելը:

Սույն հոդվածի 2-ր և 3-րդ մասերով նախատեսված հանցագործություններն ունեն առավել վտանգավոր տեսակ, որը նախատեսված է 4-րդ մասի մեջ: Մասնավորապես, առավել խիստ պատասխանատվություն են առաջացնում նույն հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասերով նախատեսված արարքները, որոնք կատարվել են՝

- մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից,
- երկու կամ ավելի անձի նկատմամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի 154.2-րդ հոդվածի հինգերորդ մասը նախատեսում է քրեական պատասխանատվություն՝

Ընտրությունների կամ հանրաքվեի նշանակման որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ընտրությունների կամ հանրաքվեի արդյունքների ամփոփումը (իսկ Ազգային ժողովի ընտրությունների դեպքում՝ Ազգային ժողով ընտրվելու մասին որոշումը) թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) անդամի կամ լիազորված անձի, վստահված անձի, հանրաքվեի նախաձեռնող խմբի անդամի կամ լիազոր ներկայացուցչի կողմից անձամբ կամ նրանց (այդ թվում՝ կուսակցության կամ դաշինքի) անունից կամ որևէ այլ եղանակով կամ բարեգործության անվան տակ ընտրողներին, ինչպես նաև հանրաքվեի մասնակիցներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ (բացի կուսակցության անվանու-

մը կամ խորհրդանիշերը կամ թեկնածուի անունը, ազգանունը կամ պատկերը բովանդակող և նվազագույն աշխատավարձի եռապատիկը չգերազանցող արժեքով քարոզչական տպագիր և այլ նյութերի կամ առարկաների) տալու (խոստանալու) կամ ծառայություններ մատուցելու (խոստանալու) կամ բարեգործության հետ միաժամանակ նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն իրականացնելու համար:

Օրյեկտը: Այս հանցագործությամբ անձը ոտնձգում է քվեարկության անցկացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների դեմ:

Օրյեկտիվ կողմ: Այս հանցագործության օրյեկտիվ կողմը բաղկացած է մեկից ավել այլընտրանքային արարքներից, որոնք են՝

- հոդվածի 5-րդ մասի մեջ նշված ժամանակահատվածում, նշված եղանակով ընտրողներին, ինչպես նաև հանրաքվեի մասնակիցներին նշված պայմաններով նշված գույքը տալը (խոստանալը) կամ ծառայություններ մատուցելը (խոստանալը),
- նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն իրականացնելը բարեգործության հետ միաժամանակ:

Նշված ժամանակահատվածն է՝

- Ընտրությունների կամ հանրաքվեի նշանակման որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ընտրությունների կամ հանրաքվեի արդյունքների ամփոփումը (իսկ Ազգային ժողովի ընտրությունների դեպքում՝ Ազգային ժողով ընտրվելու մասին որոշումը):

Եղանակներն են՝

- թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) անդամի կամ լիազորված անձի, վստահված անձի, հանրաքվեի նախաձեռնող խմբի անդամի կամ լիազոր ներկայացուցչի կողմից անձամբ
- կամ նրանց (այդ թվում՝ կուսակցության կամ դաշինքի) անունից
- կամ որևէ այլ եղանակով
- կամ բարեգործության անվան տակ:

Պայմաններն են՝

- անհատույց
- կամ արտոնյալ պայմաններով:

Գույքի տեսակներն են՝

- դրամը,
- սննդամթերքը,
- արժեթղթերը,
- ապրանքները՝ բացի կուսակցության անվանումը կամ խորհրդանիշերը կամ թեկնածուի անունը, ազգանունը կամ պատկերը բովանդակող և նվազագույն աշխատավարձի եռապատիկը չգերազանցող արժեքով քարոզչական տպագիր և այլ նյութերի կամ առարկաների:

Այս հանցակազմը ձևական է. հանցագործությունն ավարտված է համարվում նշված ժամանակահատվածում, նշված եղանակով ընտրողներին, ինչպես նաև հանրաքվեի մասնակիցներին նշված պայմաններով նշված գույքը տալու (խոստանալու) կամ ծառայություններ մատուցելու (խոստանալու) պահից, ինչպես նաև բարեգործության հետ միաժամանակ նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն իրականացնելու պահից: Ընդ

որում, «խոստանալ» բառը մեկնաբանվում է նույնկերպ, ինչ սույն հոդվածի նախորդ մասերի դեպքում:

Սուբյեկտիվ կողմ: Հանցագործությունը կատարվում է միայն ուղղակի դիտավորությամբ:

Սուբյեկտն ընհանուր է: Տվյալ հոդվածով նախատեսված արարքը կատարելու համար ֆիզիկական անձը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե մեղսունակ է և լրացել է նրա 16 տարեկանը՝ նախքան հանցանքի կատարումը:

Այս հոդվածի 6-րդ մասը նախատեսում է խրախուսական նորմ՝ սահմանելով, որ՝

Կաշառք ստացող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե այդ անձը մինչև կաշառք ստանալու մասին իրավապահ մարմիններին հայտնի դառնալը, բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, այդ մասին կամովին հայտնել է քրեական հետապնդման մարմիններին և աջակցել հանցագործությունը բացահայտելուն:

Համարվում է՝ անձը հայտնել է կամովին, եթե 1) կաշառք ստացողը հանցանքի մասին հայտնել է իր ցանկությամբ, այլ ոչ թե՝ հարկադրված, 2) կաշառք ստացողը գիտակցել է, որ իրավապահ մարմինները տեղյակ չեն հենց իր կողմից կաշառք ստանալու փաստի մասին: Ընդ որում, նշանակություն չունի՝ քրեական գործ հարուցվել է, թե ոչ: Կարևորն այն է, որ կաշառք ստացողը գիտակցի, որ իրավապահ մարմինները տեղյակ չեն կաշառք ստացողի անձի մասին: Օրինակ, պետք է ազատվեն քրեական պատասխանատվությունից կամովին հայտնելու հիմքով այն քաղաքացիները, ոորոնք հայտնում են տվյալ անձից իրենց կողմից ստացվախ կաշառքի մասին, եթե իրավապահ

մարմինները քննում են կաշառք տվողի վերաբերյալ գործը և զանգվածային լրատվության միջոցների օգնությամբ դիմում են քաղաքացիներին կաշառակերության իրենց անհայտ այլ փաստերի մասին հայտնելու խնդրանքով: Պետք է ավելացնել՝ կարևոր չէ՝ որ իրավապահ մարմին է ներկայացվում տեղեկություն՝ կաշառք ստանալու փաստի մասին:

ՀՀ քրեական օրենսգրքի 154.4-րդ հոդվածը նախատեսում է քրեական պատասխանատվություն՝

Քվեարկության օրը զենք կրելու իրավունք ունեցող անձի կողմից զենքով ցուցադրաբար, առանց ծառայողական անհրաժեշտության տեղամասային կենտրոն մուտք գործելու համար:

Օրյեկտը: Այս հանցագործությամբ անձը ոտնձգում է քվեարկության անցկացման կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների դեմ:

Օրյեկտիվ կողմ: Այս հանցագործության արարքն է տեղամասային կենտրոն զենքով մուտք գործելը, որը կատարվել է հատուկ եղանակով՝ ցուցադրաբար, և հատուկ իրադրության մեջ՝ առանց ծառայողական անհրաժեշտության:

Համարվում է՝ արարքը կատարված է ցուցադրաբար, եթե անձը ցույց է տվել՝ իր մոտ զենքի առկայությունը ցանկացած ձևով: Զենք ասելով՝ տվյալ հոդվածի իմաստով նկատի են ունեցվում ոչ թե զենքի գոլոր տեսակները, այլ միայն սառը զենքն ու հրազենը:

Այս հանցակազմը ձևական է. հանցագործությունն ավարտված է համարվում նշված եղանակով և նշված իրադրության մեջ տեղամասային կենտրոն զենքով մուտք գործելու պահից:

Սուբյեկտիվ կողմ: Հանցագործությունը կատարվում է միայն ուղղակի դիտավորությամբ. հանցավորը պետք է գիտակցի, որ զենքով մուտք է գործում տեղամասային կենտրոն նշված եղանակով և նշված իրադրության պայմաններում՝ անկախ նրանից՝ ինչ շարժառիթ կամնպատակ է ունեցել:

Սուբյեկտն հատուկ է: Տվյալ հոդվածով նախատեսված արարքը կատարելու համար ֆիզիկական անձը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե նա մեղսունակ է և լրացել է նրա 16 տարեկանը՝ նախքան հանցանքը կատարելը, և նա իրավունք ունի կրել զենք:

ՀՀ քրեական օրենսգրքի 154.5-րդ հոդվածը նախատեսում է քրեական պատասխանատվություն՝

Վստահված անձին, ընտրական հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական փաստաթղթերին սահմանված դեպքերում և կարգով ծանոթանալուն խոչընդոտելու, ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճենները, քաղվածքները չտալու համար:

Օբյեկտը: Այս հանցագործությամբ անձը ոտնձգում է քվեարկության անցկացման կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների դեմ:

Օբյեկտիվ կողմ: Այս հանցագործության օբյեկտիվ կողմը բնութագրվում է երկու երկրնորեղի արարքներով, դրանք են՝

- վստահված անձին, ընտրական հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական փաստաթղթերին սահմանված դեպքերում և կարգով ծանոթանալուն խոչընդոտելը,

- նշված անձանց ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճենները, քաղվածքները չտալը:

Համարվում է՝ խոչընդոտելն առկա է, եթե ստեղծվել է ցանկացած արգելք՝ սահմանված կարգով և դեպքերում ընտրական փաստաթղթերին ծանոթանալու համար:

Այս հանցակազմը ձևական է. հանցագործությունն ավարտված է համարվում նշված անձանց նշված փաստաթղթերին ծանոթանալուն խոչընդոտելու, այդ փաստաթղթերը չտալու պահից:

Սուբյեկտիվ կողմ: Հանցագործությունը կատարվում է միայն ուղղակի դիտավորությամբ. հանցավորը պետք է գիտակցի, որ սահմանված դեպքերում խոչընդոտում է նշված անձանց սահմանված կարգով ծանոթանալ փաստաթղթերին կամ նրանց չի տալիս այդ փաստաթղթերի պատճենները:

Սուբյեկտն ընդհանուր է խոչընդոտելու դեպքում. տվյալ արարքը կատարելու համար ֆիզիկական անձը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե նա մեղսունակ է և լրացել է նրա 16 տարեկանը՝ նախքան հանցանքը կատարելը: Ինչ վերաբերում է չտալուն, տվյալ դեպքում անձը ենթակա է քրեական պատասխանատվություն, եթե համապատասխան պատասխանատու անձ է, ումից հնարավոր է պահանջել և ստանալ պատճեններ:

ՀՀ քրեական օրենսգրքի 154.6-րդ հոդվածը նախատեսում է քրեական պատասխանատվություն՝

*Ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից
իր լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, որի արդյունքում անհնարին է դարձել ընտրական հանձնաժողովի կողմից*

քվեարկության կամ ընտրության արդյունքների ամփոփումը:

Օբյեկտը: Այս հանցագործությամբ անձը ոտնձգում է քվեարկության անցկացման կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների դեմ:

Օբյեկտիվ կողմ: Այս հանցագործության օբյեկտիվ կողմը բնութագրվում է երկու երկրնսրելի արարքներով և հետևանքով, դրանք են՝

- Ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից իր լիազորությունները չկատարելը, կամ
- Ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից իր լիազորությունները ոչ պատշաճ կատարելը, որոնց արդյունքում՝
- անհնարին է դարձել ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության կամ ընտրության արդյունքների ամփոփումը:

Ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները նախատեսված ՀՀ ընտրական օրենսգրքով: Տվյալ հոդվածի իմաստով՝ նկատի ունեցվում ցանկացած արարք, որը հանդիսանում է լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դրսևորում:

Այս հանցակազմը նյութական է. հանցագործությունն ավարտված է համարվում այն պահից, երբ անհնար է դարձել ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության կամ ընտրության արդյունքների ամփոփումը:

Սուբյեկտիվ կողմ: Հանցագործությունը կատարվում է ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ. հանցավորը պետք է գիտակցի, որ չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում իր

լիազորությունները, նախատեսի, որ դրանց արդյունքում անհնար է լինելու ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության կամ ընտրության արդյունքների ամփոփումը և ցանկանա դա (ուղղակի դիտավորություն) կամ նախատեսի, որ հնարավոր է՝ դրանց արդյունքում անհնար կդառնա ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության կամ ընտրության արդյունքների ամփոփումը և չցանկանա՝ դա, բայց գիտակցաբար թույլ տա (անուղղակի դիտավորություն):

Սուբյեկտն հատուկ է: Տվյալ արարքը կատարելու համար ֆիզիկական անձը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե նա մեղսունակ է և լրացել է նրա 16 տարեկանը՝ նախքան հանցանքը կատարելը, և նա հանդիսանում է ընտրական հանձնաժողովի նախագահ:

ՀՀ քրեական օրենսգրքի 154.7-րդ հոդվածը նախատեսում է քրեական պատասխանատվություն՝

Անձնական դրդումներով կամ խմբային շահերից ելնելով՝ քվեատուփը, ընտրողների ստորագրած ցուցակը, տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը, հանձնաժողովի կնիքը, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի անհատական կնիքը, ինքնաստսնձվող դրոշմանիշը, ընտրողի վերաբերյալ տվյալներ պարունակող քվեարկության կտրոնը կամ համարակալված կտրոնը, ընտրողների էլեկտրոնային գրանցման տեխնիկական սարքավորումը, կառավարության կողմից ընտրված մասնագիտացված կազմակերպության տեղադրած տեսախցիկը, ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկը կամ ընտ-

*քական փաստաթղթերի փաթեթը հափշտակելու
համար:*

Օբյեկտը: Այս հանցագործությամբ անձը ոտնձգում է քվեարկության անցկացման կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների դեմ:

Օբյեկտիվ կողմ: Այս հանցագործության օբյեկտիվ կողմը հոդվածի մեջ նշված տարբեր առարկաներից որևիցե մեկը հափշտակելն է, դրանք են՝

- քվեատուփը,
- ընտրողների ստորագրած ցուցակը,
- տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը,
- հանձնաժողովի կնիքը,
- տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի անհատական կնիքը,
- ինքնաստանձվող դրոշմանիշը,
- ընտրողի վերաբերյալ տվյալներ պարունակող քվեարկության կտրոնը կամ համարակալված կտրոնը,
- ընտրողների էլեկտրոնային գրանցման տեխնիկական սարքավորումը,
- կառավարության կողմից ընտրված մասնագիտացված կազմակերպության տեղադրած տեսախցիկը,
- ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկը, կամ
- ընտրական փաստաթղթերի փաթեթը:

Հափշտակության տեսակները նաժատեսված ՔՕ այլ հոդվածներով, դրանք են՝ գողություն, կողոպուտ, ավագակոություն, խարդախություն, յուրացնել կամ վատնել, առանձնակի արժեք

ունեցող առարկաների հափշտակում, հափշտակություն՝ համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ: Տվյալ հոդվածի դեպքում հնարավոր են հափշտակության հետևյալ տեսակները՝ գողություն, կողոպուտ, ավազակություն, խարդախություն:

Այս հանցակազմը նյութական է. հանցագործությունն ավարտված է համարվում այն պահից, երբ հանցավորն ունի իրական հնարավորություն հափշտակվածը օգտագործելու կամ տնօրինելու: Բացառություն է կազմում այն դեպքը, երբ նշված առարկաներն հափշտակվում են ավազակության եղանակով. այդ դեպքում արարքն համարվում է ավարտված նշված առարկաներն հափշտակելու նպատակով հարձակվելու պահից, որը կատարվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով:

Սուբյեկտիվ կողմ: Հանցագործությունը կատարվում է ուղղակի դիտավորությամբ. հանցավորը պետք է գիտակցի, որ հափշտակում է նշված առարկաները՝ անձնական դրդումներով կամ խմբային շահերից ելնելով:

Սուբյեկտն ընդհանուր է: Տվյալ արարքը կատարելու համար ֆիզիկական անձը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե նա մեղսունակ է և լրացել է նրա 16 տարեկանը՝ նախքան հանցանքը կատարելը:

Այս հանցագործությունն ունի առավել վտանգավոր տեսակներ, որոնք նախատեսված են նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով: Մասնավորապես, առավել խիստ պատասխանատվություն են առաջացնում նույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքները, որոնք՝

- կատարվել են մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

- կատարվել են ընտրական հանձնաժողովի անդամի կողմից:

Այս հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործությունն ունի հատուկ սուբյեկտ, այն է՝ ընտրական հանձնաժողովի անդամը:

ՀՀ քրեական օրենսգրքի 154.8-րդ հոդվածը նախատեսում է քրեական պատասխանատվություն՝

Այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ դիտավորությամբ սուտ հայտարարություն տալու կամ կեղծ ստորագրությամբ հայտարարություն (ոչ հայտարարատուի կողմից կամ մտացածին անձի անունից ստորագրված հայտարարություն) դիմումին կից ներկայացնելու համար:

Օրյեկտը: Այս հանցագործությամբ անձը ոտնձգում է քվեարկության կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների դեմ:

Օրյեկտիվ կողմ: Այս հանցագործության օրյեկտիվ կողմը երկու երկընտրելի արարքներն են, դրանք են՝

- սուտ հայտարարություն տալը,
- կեղծ ստորագրությամբ հայտարարություն (ոչ հայտարարատուի կողմից կամ մտացածին անձի անունից ստորագրված հայտարարություն) դիմումին կից ներկայացնելը:

Ընդ որում, խոսքը ոչ թե սովորական, այլ այնպիսի հայտարարության մասին է, որը կարող է պայմաններ ստեղծել՝ քվեարկել այլ անձի փոխարեն:

Այս հանցակազմը ձևական է. հանցագործությունն ավարտված է համարվում այն պահից, երբ հանցավորը տվել է սուտ հայտարարություն կամ դիմումին կից ներկայացրել է կեղծ հայ-

տարարություն՝ անկախ նրանից հանցավորին հաջողվել է քվեարկել այլ անձի փոխարեն, թե ոչ:

Սուբյեկտիվ կողմ: Հանցագործությունը կատարվում է ուղղակի դիտավորությամբ. հանցավորը պետք է գիտակցի, որ տալիս է սուտ հայտարարություն կամ դիմումին կից ներկայացրել է կեղծ հայտարարություն:

Սուբյեկտն ընդհանուր է: Տվյալ արարքը կատարելու համար ֆիզիկական անձը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե նա մեղսունակ է և լրացել է նրա 16 տարեկանը՝ նախքան հանցանքը կատարելը:

ՀՀ քրեական օրենսգրքի 154.9-րդ հոդվածը նախատեսում է քրեական պատասխանատվություն՝

Ընտրակաշառքի միջնորդության՝ ընտրակաշառք տվողի և ընտրակաշառք ստացողի միջև ընտրակաշառքի շուրջ համաձայնության գալուն կամ արդեն կայացած համաձայնության իրականացմանը նպաստելու համար:

Օբյեկտը: Այս հանցագործությամբ անձը ոտնձգում է քվեարկության կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների դեմ:

Օբյեկտիվ կողմ: Այս հանցագործության օբյեկտիվ կողմը երկու երկրնորելի արարքներն են, դրանք են՝

- ընտրակաշառք տվողի և ընտրակաշառք ստացողի միջև ընտրակաշառքի շուրջ համաձայնության գալուն նպաստելը,
- արդեն կայացած համաձայնության իրականացմանը նպաստելը:

Այս հանցակազմը ձևական է. հանցագործությունն ավարտված է համարվում այն պահից, երբ հանցավորը որևիցե եղանակով նպաստել է նշված համաձայնության գալուն կամ արդեն կայացած համաձայնության իրականացմանը:

Սուբյեկտիվ կողմ: Հանցագործությունը կատարվում է ուղղակի դիտավորությամբ. հանցավորը պետք է գիտակցի, որ նպաստում է նշված համաձայնության գալուն կամ արդեն կայացած համաձայնությանը իրականացմանը:

Սուբյեկտն ընդհանուր է: Տվյալ արարքը կատարելու համար ֆիզիկական անձը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե նա մեղսունակ է և լրացել է նրա 16 տարեկանը՝ նախքան հանցանքը կատարելը:

2.2. Քրեական գործ հարուցելու կարգը

Այն դեպքում, երբ փաստաբանի գնահատմամբ հաճախորդի կողմից ներկայացված հանգամանքների մեջ առերևույթ առկա են հանցագործության հատկանիշներ, անհրաժեշտ է ապահովել քրեական գործի հարուցում, եթե դա բխում է հաճախորդի շահերից: Քրեական դատավարության օրենսգիրքն անդրադառնում է այդ կապակցությամբ ծավալվող իրավահարաբերություններին: Եվ սույն ուղեցույցի մեջ ներկայացվում են ինչպես օրենսդրական կարգավորումներն, այնպես էլ փաստաբանական գործունեության ընթացքում դուրս բերված որոշակի նրբություններ:

Քրեական գործ հարուցվում է այն դեպքում, երբ առկա են օրենքով նախատեսված առիթներ և հիմքեր: Գործը հարուցվում

է դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի կողմից (ՔԴՕ 175-րդ հոդված): Ընդ որում, քննչական ենթակայության կարգավումների համաձայն՝ խնդրո առարկա հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործեր հարուցվում են ՀՀ քննչական կոմիտեի քննիչների կողմից (ՔԴՕ 190-րդ հոդվածի 1-ին մաս): Ընդ որում, ինչպես մեկնաբանված է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից

«(...) Քրեական գործի հարուցման փուլում վարույթն իրականացնող մարմինը պարզում է քրեական գործ հարուցելու առիթների և հիմքերի առկայության կամ բացակայության փաստը: Այս փուլում հանցագործության փաստի հաստատման և անձի մեղքի հարց չի քննարկվում» (տե՛ս Գազիկ Դևոնյանի վերաբերյալ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0044/11/13 որոշման 14-րդ կետը):

Քրեական գործ հարուցելու հիմքը ստացված տվյալների մեջ հանցագործության հատկանիշների առերևույթ առկայությունն է և քրեական գործի հարուցումը բացառող հանգամանքների բացակայությունը: Քրեական գործ հարուցելու առիթները նախատեսված են ՔԴՕ 176-րդ հոդվածով: Այսպես, քրեական գործ հարուցելու առիթ է հանցագործության մասին հաղորդումը, որը ներկայացված է ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից և ուղղված է այն սուբյեկտներին, որոնք իրավասու են հարուցել քրեական գործ՝ դատախազին, քննիչին կամ հետաքննության մարմնին: Առիթներ են նաև զանգվածային լրատվության միջոցների հաղորդումները, ինչպես նաև հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյու-

թական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս:

Հանցագործության մասին հաղորդում

Գործնականում առավել հաճախ հանդիպում են այն դեպքերը, երբ քրեական գործ հարուցվում է ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հաղորդումների հիման վրա: Այն դեպքում, երբ փաստաբանը կամ որևիցե այլ ֆիզիկական անձ ներկայացնում է հանցագործության մասին հաղորդում, գործում են ՔԴՕ 177-րդ հոդվածի կանոնները: Իրավաբանական անձանց կողմից հաղորդում ներկայացնելիս՝ գործում է ՔԴՕ 178-րդ հոդվածով նախատեսված կարգը: ՀՀ վճռաբեկ դատարանն ընդունել է մի շարք որոշումներ, որոնք մեկնաբանում են հաղորդման նշանակությունը, հասկացությունը: Այսպես՝

«(...) Հանցագործության մասին հաղորդումը՝ որպես քրեական գործ հարուցելու առիթ, իրենից ներկայացնում է ֆիզիկական կամ իրավաբանական անձի գրավոր կամ բանավոր դիմումը քրեական հետապնդում իրականացնող մարմնին՝ կոնկրետ հանցագործության տարրեր պարունակող նախապատրաստվող կամ կատարված հանցագործության մասին տեղեկատվությամբ: Առիթը պայման է, որի առկայության դեպքում օրենքը լիազորում է իրավասու մարմիններին և պաշտոնատար անձանց մտնել իրավահարաբերությունների մեջ՝ կատարել գործողություններ, որոնք իրենց միասնությամբ ներկայացնում են քրեական դատավարության սկզբնական փուլի գործունեություն: Քրեական գործի հարուցման

առիթները պետք է բովանդակեն տեղեկություն հան-
ցագործության հատկանիշները մատնանշող տվյալ-
ների առկայության մասին: Միայն այս դեպքում
դրանք կարող են հիմք հանդիսանալ ստուգելու և
քրեական գործ հարուցելու կամ հարուցումը մերժե-
լու որոշում ընդունելու համար: Այսինքն՝ քրեական
գործ հարուցելու առիթ կարող է հանդիսանալ ոչ թե
ցանկացած, այլ՝ միայն հանցագործության մասին
արված հաղորդումը: (...)» (տե՛ս Էմմա Կարապետյա-
նի գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի
հուլիսի 13-ի թիվ ՎԲ-133/07 որոշումը):

Մեկ այլ որոշման մեջ Վճռաբեկ դատարանը շարադրել է՝

«14. Վերահաստատելով վկայակոչված իրավա-
կան դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն ար-
ձանագրում է, որ հանցագործության մասին հաղոր-
դումն իրավաբանական փաստ է, որն առաջացնում
է այն ստուգելուն և լուծելուն ուղղված դատավարա-
կան իրավահարաբերություններ: Հաղորդումը՝ որ-
պես քրեական գործ հարուցելու առիթ, պետք է հա-
մապատասխանի որոշակիության բովանդակային
չափանիշին, մասնավորապես՝ բովանդակի տեղե-
կություն կոնկրետ հանցագործության հատկանիշ-
ները մատնանշող տվյալների առկայության մասին:
Նշվածը, սակայն, չի ենթադրում, որ քննարկման և
լուծման ենթակա է միայն այն հաղորդումը, որը պա-
րունակում է քրեական գործ հարուցելու բավարար
հիմքեր: Հաղորդման մեջ պարունակվող տեղեկու-
թյունները կարող են բավարար լինել այն քննարկե-

լուն, ստուգելուն և լուծելուն ուղղված օրենսդրական կարգավորումները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածներ) գործողության մեջ դնելու համար, եթե ողջամիտ հավանակություն կա, որ դրանց ստուգման արդյունքում կարող են հայտնաբերվել, այլ ոչ թե հաստատապես հայտնաբերվելու են քրեական գործ հարուցելու բավարար հիմքեր: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ քննարկված չափանիշին համապատասխանող յուրաքանչյուր հաղորդում առաջացնում է վարույթ իրականացնող մարմնի պարտականությունը դրա կապակցությամբ կայացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը» (տե՛ս Հրայր Մանուկյանի գործով Վճռաբեկ դատարանի 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵԿԴ/0154/11/14 որոշումը):

Հաղորդման ձևը

ՔԴՕ 177-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձինք հաղորդումները ներկայացնում են գրավոր կամ բանավոր: Հոդվածի հաջորդ մասերը կարգավորում են բանավոր հաղորդում ներկայացնելու կարգը, որի համաձայն՝ բանավոր հաղորդում ներկայացնելիս կազմվում է արձանագրություն, որին առաջադրվող պահանջները մանրամասն սահմանված են նույն հոդվածով: Այն դեպքում, երբ բանավոր հաղորդումը կատարվում է որևիցե քննչական գործողության կամ դատական նիստի ընթացքում, դրա վերաբերյալ առանձին արձանագրություն չի կազմվում, և հաղորդումը մտցվում է համապատասխան քննչական գործո-

դության կամ դատական նիստի արձանագրության մեջ: Ինչ վերաբերում է գրավոր հաղորդումներին, դրանց ձևի վերաբերյալ կարգավորումներ նախատեսված չեն: Այս առթիվ պետք է նշել, որ գործնականում առաջանում են որոշակի դժվարություններ: Բանն այն է, որ գործնականում առավել հաճախ են հանդիպում այն դեպքերը, երբ փաստաբանը, տեղեկանալով հանցագործության հատկանիշներ պարունակող տվյալների մասին, ուղարկում է համապատասխան գրություն նշված իրավապահ մարմիններից որևիցե մեկին, որն իր էությանմբ հանցագործության մասին հաղորդում է: Խնդիրն այն է, որ անկախ նրանից՝ այդ գրությունները վերնագրված են՝ «հանցագործության մասին հաղորդում», թե ոչ՝ նշված իրավապահ մարմինները որպես կանոն այդ գրությունները չեն համարում հաղորդում՝ ՔԴՕ 177-րդ հոդվածի իմաստով: Այդ գրություններն ընկալվում են որպես՝ դիմում: Իրավապահ մարմինների՝ Դատախազության, Քննչական կոմիտեի, Ոստիկանության կողմից, որպես կանոն, հանցագործության մասին հաղորդում է ճանաչվում բացառապես Ոստիկանության համապատասխան ստորաբաժանումում տրված հաղորդումը: Ընդ որում, ստորաբաժանումում հաղորդումը կարող է տրվել ինչպես բանավոր, որի վերաբերյալ կազմվում է արձանագրություն, այնպես էլ՝ գրավոր՝ տվյալ ստորաբաժանումում առկա ձևաթղթի միջոցով:

Ինչ վերաբերում է իրավաբանական անձանց հաղորդումներին, դրանք պետք է ունենան ծառայողական նամակի կամ վավերացված հեռագրի, հեռախոսագրի, ռադիոգրի, էլեկտրոնային փոստի կամ հաղորդումների այլ ընդունված ձև: Հաղորդմանը կարող են կցվել հանցանքի կատարումը հաստատող փաստաթղթեր: Այս կարգը նախատեսված է ՔԴՕ 178-րդ հոդվածով:

Ուստի, այն դեպքում, երբ փաստաբանին դիմել է համապատասխան կուսակցություն, առավել արդյունավետ է՝ հաղորդումը ներկայացնել հենց այդ կազմակերպության անունից՝ փոստային ծառայություն միջոցով՝ ուղարկելով համապատասխան գրություն, կամ՝ ներկայանալ ոստիկանության ստորաբաժանում՝ տեղում տալով գրավոր կամ բանավոր հաղորդում՝ համապատասխան ֆիզիկական անձի անունից, որը ներկայացել է:

Կախված նրանից՝ ով է փաստաբանի հաճախորդը և՝ ով է տալիս հաղորդումը, անհրաժեշտ է նկատի ունենալ որոշակի հանգամանքներ: Այսպես, հնարավոր չէ ներկայացնել հաղորդում՝ ֆիզիկական անձի անունից՝ լիազորագրի հիման վրա, քանի որ այդպիսի կարգ գոյություն չունի: Ուստի, հաղորդում տալու համար բացարձակ անհրաժեշտ չէ հաղորդմանը կցել ֆիզիկական անձի անունից հանդես գալու վերաբերյալ լիազորագիր: Ինչ վերաբերում է իրավաբանական անձանց հաղորդումներին, դրանք տրվում են համապատասխան ներկայացուցիչների կողմից, որոնք ունեն լիազորություն՝ իրավաբանական անձի անունից հանդես գալու համար: Տվյալ դեպքում, եթե ներկայացուցիչը փաստաբանն է, նրա լիազորությունները կարող են հաստատվել համապատասխան լիազորագրով, որը տրված է իրավաբանական անձի այն պաշտոնատար անձի կողմից, որն իրավասու է փաստաբանին շնորհել այդպիսի լիազորություն: Որպես կանոն այդպիսի պաշտոնատար անձը տվյալ իրավաբանական անձի գործադիր մարմինն է (տնօրեն, նախագահ և այլն):

Հաղորդում տալը

Գործնականում առաջանում է հարց՝ ուր ներկայացնել հաղորդումը: Պետք է նշել, որ եթե հաղորդումը ներկայացվել է ոչ

թե նշված իրավապահ մարմիններից որևիցե մեկին, այլ՝ ուրիշ պետական մարմին (Օրինակ՝ Պետական վերահսկողական ծառայություն), վերջինս ստացված գրությունը թողնում է ոչ թե անպատասխան, այլ՝ հասցեագրում է նշված իրավապահ մարմիններից որևիցե մեկին: Ինչ վերաբերում է այն հարցին, թե կոնկրետ որ իրավապահ մարմին է անհրաժեշտ ներկայացնել հաղորդումն ի սկզբանե՝ Դատախազություն, Քննչական կոմիտե, թե Ոստիկանություն, ապա պետք է նշել, որ առավել հաճախ Կոմիտե և Դատախազություն ուղարկված գրություններն հասցեագրվում են Ոստիկանության այն ստորաբաժանում, որի սպասարկման տարածքում, ենթադրվում է, կատարվել է առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող արարքը: Օրինակ, եթե հաղորդման մեջ նշված տեղեկությունների համաձայն՝ քվեարկության ընթացքում բաժանվել են դրամական միջոցներ այն տեղամասում, որը գտնվում է Երևանի Արաբկիր վարչական շրջանում, հաղորդումը կհասցեագրվի Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժին: Իհարկե, չի բացառվում, որ օրինակ, Դատախազություն ուղարկված գրությունը չհասցեագրվի Ոստիկանության որևիցե ստորաբաժանում, և անմիջապես դատախազության կողմից հարուցվի քրեական գործ: Պետք է նշել, որ գործնականում կարող են առաջանալ որոշակի դժվարություններ, երբ հաղորդումը տրվում է անմիջապես Ոստիկանության ստորաբաժանումում: Մասնավորապես, հաճախ, երբ տվյալ ստորաբաժանումը ծանրաբեռնված է, հաղորդում տալու գործընթացը կարող է տևել բավականին երկար՝ օրինակ Ոստիկանության այն ծառայողին սպասելու պատճառով, որը պետք է կազմի արձանագրությունը՝ բանավոր հաղորդում տալու մասին:

Հաղորդման քննարկումը

Հաղորդումները քննարկվում են երկու եղանակով՝ անհապաղ կամ ստացման պահից 10 օրվա ընթացքում, երբ անհրաժեշտ է ստուգել գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելը: Այս ժամկետում նախապատրաստվում են նյութեր՝ քրեական գործ հարուցելու կամ դրա հարուցումը մերժելու հարցը լուծելու համար: Մասնավորապես, նշված ժամկետում կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ, այլ նյութեր, ինչպես նաև կարող է կատարվել դեպքի վայրի զննություն, հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում կարող են բերման և անձնական խուզարկության ենթարկվել անձինք, հետազոտման համար վերցվել նմուշներ, նշանակվել փորձաքննություն: Նյութերի նախապատրաստումը կարող է իրագործվել հետաքննության մարմնի, քննիչի կողմից (ՔԴՕ 180-րդ հոդվածի 2-5-րդ մասեր): Գործնականում նյութերի նախապատրաստումն իրագործվում է, որպես կանոն, հետաքննության մարմնի կողմից: Ավելին, եթե Դատախազություն ուղարկված հաղորդման դեպքում բացակայում է նյութերի նախապատրաստման անհրաժեշտությունը, որպես կանոն Դատախազությունը հարուցում է քրեական գործ, այլ ոչ թե՝ մերժում դրա հարուցումը: Ամփոփելով, հաղորդման քննարկման ընթացքում հնարավոր են երեք որոշումներ՝ քրեական գործի հարուցում, դրա հարուցման մերժում, հաղորդումն ըստ ենթակայության հանձնում: Պետք է նշել, որ թեև ՔԴՕ 186-րդ հոդվածի համաձայն՝ հաղորդումն ըստ ենթակայության հանձնվում է միայն այն դեպքում, երբ քրեական գործի հարուցման հարցի լուծման համար հանցանքի կատարման վայրում անհրաժեշտ է կատա-

րել դեպքին առնչվող նախնական գործողություններ, գործնականում հաղորդումներն հանձնվում են ըստ ենթակայության՝ անկախ այն հանգամանքից՝ այդպիսի անհրաժեշտություն կա, թե ոչ: Ընդ որում, «ըստ ենթակայության հանձնել» ասելով նկատի է ունեցվում ինչպես այլ պետական մարմին, այնպես էլ տվյալ մարմնի ներսում որևիցե այլ ստորաբաժանում հանձնելը: Մասնավորապես, Դատախազությունը կարող է հարուցել քրեական գործ և այն ուղարկել քննիչին՝ նախաքննություն կատարելու համար (ՔԴՕ 187 հոդված) կամ՝ հաղորդումն ուղարկել Ոստիկանության համապատասխան ստորաբաժանում: Այլ դեպքում Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի ստորաբաժանումը, օրինակ, կարող է նախապատրաստել նյութեր և հարուցել քրեական գործ կամ մերժել դրա հարուցումը կամ հաղորդումն ուղարկել Արաբկիրի բաժին՝ նյութեր նախապատրաստելու համար:

Նյութերի նախապատրաստման փուլում ամենից հաճախ կատարվող գործողությունը բացատրություն վերցնելն է: Պետք է նշել, որ թեև ֆիզիկական անձինք պարտավոր են տալ բացատրություն Ոստիկանության ծառայողի պահանջի դեպքում, որևիցե պատասխանատվություն նախատեսված չէ՝ այդ պահանջը չկատարելու համար: Արդյունքում, երբ անձինք հրաժարվում են տալ բացատրություն՝ ծառայողը կազմում է համապատասխան արձանագրություն՝ դրա վերաբերյալ: Պետք է նշել նաև, որ որպես կանոն Ոստիկանության ստորաբաժանումում պահանջում են տալ բացատրություն նույնիսկ այն դեպքում, երբ հաղորդման մեջ արդեն իսկ շարադրվել են բոլոր հայտնի տվյալները: Ուստի, հաճախ կարելի է հանդիպել այնպիսի իրա-

վիճակների, որ բացատրության տեքստը գրեթե կրկնում է հաղորդման բովանդակությունը:

Ամփոփելով և նկատի ունենալով գործնականում ձևավորված իրողությունը՝ առավել արդյունավետ է՝ փաստաբանի կողմից ուղարկել գրություն Ոստիկանության այն ստորաբաժանում, որի սպասարկման տարածքում, ենթադրվում է, կատարվել է առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող արարքը: Դրան հաջորդում են համապատասխան գործընթացներ: Մասնավորապես, առավել հաճախ այդ գրությունն ընկալվում է որպես դիմում, այլ ոչ թե՝ հանցագործության մասին հաղորդում: Այնուհետև, Ոստիկանության ստորաբաժանման հետաքննության բաժինը իրավասու է կայացնել երեք որոշումներից որևիցե մեկը՝ հարուցել գործ, մերժել դրա հարուցումը կամ հաղորդումն (դիմումն) հանձնել ըստ ենթակայության: Եթե հաղորդումը չի հանձնվում այլ մարմին կամ ստորաբաժանում՝ ըստ ենթակայության, հետաքննության մարմինը, որպես կանոն, սկսում է նախապատրաստել նյութեր՝ հաղորդումն անհապաղ քննարկելու փոխարեն: Հետաքննության մարմինը պարտավոր է նախապատրաստել նյութեր՝ 10 օրվա ընթացքում: Դա է պատճառը, որ փաստաբանի հետ հաստատվում է կապ՝ հնարավորինս սեղմ ժամկետներում և նրան առաջարկվում է ներկայանալ ստորաբաժանում: Փաստաբանին առաջարկվում է տալ բացատրություն, տրամադրել փաստաթղթեր, որոնք կարող են նպաստել քրեական գործ հարուցելու կամ դրա հարուցումը մերժելու հարցը լուծելուն: Նաև առաջարկվում է ապահովել այն անձանց կողմից ստորաբաժանում ներկայանալը՝ բացատրություն տալու նպատակով, որոնք կարող են հայտնել անհրաժեշտ տվյալներ: Հնարավոր է նաև, որ Ոստիկանու-

թյան հետաքննության բաժնի ծառայողն առաջարկի տալ բանավոր հաղորդում, որի վերաբերյալ տեղում կազմվում է արձանագրություն, կամ՝ գրավոր հաղորդում՝ համապատասխան ձևաթղթի միջոցով: Ընդ որում, Ոստիկանության ծառայողը սովորաբար չի առարկում, երբ հաղորդումը տրվում է ոչ թե փաստաբանի, այլ ուրիշ անձի կողմից:

Լրատվության միջոցների հաղորդումները

Ընտրական գործընթացները լուսաբանվում են լրատվության տարբեր միջոցների կողմից: Եվ գործնականում չեն բացառվում այնպիսի իրավիճակներ, երբ լրագրողի արհեստավարժ աշխատանքի արդյունքում բացահայտվեն տվյալներ, որոնք առերևույթ պարունակում են հանցագործության հատկանիշներ: Տվյալ դեպքում կիրառելի են Քրեական դատավարության օրենսգրքի 179-րդ հոդվածով նախատեսված կարգավորումները: Մասնավորապես, լրատվության միջոցների հաղորդումներ են հանդիսանում կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների մասին հաղորդումները մամուլում, ռադիոյով, հեռուստատեսությամբ, ինչպես նաև լրատվության միջոցներին հասցեագրված և չհրապարակված հաղորդակցություններում: Ասվածից հետևում է, որ համարվում է՝ հաղորդումը տրված է լրատվության միջոցի, այլ ոչ թե ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, եթե հանցագործության հատկանիշներ պարունակող տվյալները տեղ են գտել մամուլում, ռադիոյով, հեռուստատեսությամբ կամ եթե դրանք հասցեագրվել են լրատվամիջոցներին և դեռևս չեն հրապարակվել: Այսպիսի իրավիճակներում որպես կանոն նախապատրաստվում են նյութեր, և հանցագործությունների մասին հաղորդումներ հրապար-

րակած կամ ըստ պատկանելության ուղարկած լրատվության միջոցները, ինչպես նաև այդ հաղորդումների հեղինակները պարտավոր են հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի պահանջով ներկայացնել հանցագործության մասին հաղորդումը հաստատող՝ իրենց մոտ եղած նյութերը:

Քրեական գործի նյութերով նոր գործի հարուցումը

Այն դեպքերում երբ գործով ներգրավված է մեղադրյալ, և նրան վերագրվող հանցագործություններից բացի բացահայտվում է դրանց հետ կապ չունեցող հանցագործություն՝ կատարված այլ անձի կողմից՝ առանց մեղադրյալի մասնակցության, հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը կամ դատարանը՝ կախված նրանից, թե նրանցից ում վարույթում է գտնվում գործը, ձեռնարկում են հապատասխան միջոցներ նոր քրեական գործի հարուցման նպատակով: Մասնավորապես, հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը իրենց վարույթում գտնվող քրեական գործի նյութերով կայացնում են որոշում նոր գործ հարուցելու և այն առանձին վարույթում առանձնացնելու մասին, իսկ դատարանը նման որոշում կայացնելու միջնորդությամբ դիմում է դատախազին: Այս կապակցությամբ ծավալվող իրավահարաբերությունները նախատեսված են ՔԴՕ 184-րդ հոդվածով:

Քրեական գործի հարուցումը մերժելը

Այն դեպքում, երբ քրեական գործ հարուցելու առիթն օրինական է, այսինքն՝ առկա են ՔԴՕ 176-րդ հոդվածով նախատեսված երեք փաստերից որևիցե մեկը, ինչպես նաև եթե առկա են հիմքեր, կայացվում է որոշում՝ քրեական գործ հարուցելու վերաբերյալ: Հակառակ դեպքում, քրեական գործի հարուցումը

մերժվում է: Կողմնորոշվելու համար՝ արդյոք առկա են օրինական հիմքեր՝ քրեական գործ հարուցելու համար, թե ոչ՝ անհրաժեշտ է ձեռքբերված փաստական տվյալները գնահատել ՔԴՕ 35-րդ հոդվածի տեսանկյունից, որը նախատեսում է քրեական գործի հարուցումը բացառող հանգամանքները: Այլ կերպ ասած, եթե այդ հանգամանքները բացակայում են, անհրաժեշտ է հարուցել քրեական գործ: ՔԴՕ 185-րդ և 290-րդ հոդվածները նախատեսում են քրեական գործի հարուցման մերժումը բողոքարկելու կարգը: Բողոքարկումը իրագործվում է նախ վերադաս դատախազին, այնուհետև՝ տվյալ ընդհանուր իրավասության դատարան: Ընդ որում, խոսքը հսկող դատախազի նկատմամբ վերադաս դատախազի մասին է: Պարզելու համար՝ ով է վերադաս դատախազը՝ անհրաժեշտ է առաջնորդվել «Դատախազության մասին» ՀՀ օրենք 31-րդ հոդվածով, որը նախատեսում է ենթակայությունը դատախազությունում: Ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացված որոշումն, իր հերթին, հնարավոր է բողոքարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան, իսկ վերջինիս կայացրած որոշումը՝ ՀՀ վճռաբեկ դատարան: Ընդ որում, մինչդատական վարույթի նկատմամբ վերահսկողություն իրագործելիս գործում են Վճռաբեկ դատարանի որոշ մեկնաբանություններ: Այսպես՝

«(...) քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության շրջանակներում ստուգման ենթարկելիս՝ դատարանի խնդիրն է ներկայացված բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում պարզել, թե վարույթն իրականացնող մարմինն արդյոք ստուգման է ենթարկել և հաշվի է առել այն հանգամանքները, որոնք կարող էին ազդել քրեական գործի հարուցման հարցը լուծե-

լու վրա կամ հանգեցնել անձի իրավունքների և ազատությունների խախտմանը (...): Քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության շրջանակներում ստուգման ենթարկելիս դատարանն իրավասու չէ իրավական գնահատական տալ գործում առկա նյութերին, կարծիք հայտնել անձի մեղավորության, գործում առկա (փաստական) տվյալների թույլատրելիության կամ անթույլատրելիության վերաբերյալ: Քրեական գործի հարուցման հարցը լուծելու փուլում ձեռք բերված (փաստական) տվյալներին դատարանի կողմից տրված իրավական գնահատականները, նախնական քննության մարմիններին հասցեագրված «քողարկված» ցուցումները, ուղղորդումները դուրս են մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության տրամաբանությունից» (տե՛ս Վահագն Եղիազարյանի վերաբերյալ 2014 թվականի մարտի 28-ի թիվ ՇԴ/0012/11/13 որոշման 20-րդ կետը):

Մեկ այլ որոշման մեջ Վճռաբեկ դատարանը նշել է՝

«(...) քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման դատական ստուգման ընթացքում դատարանը պետք է պարզի՝ արդյո՞ք առկա է քրեադատավարական օրենսդրության պահանջների խախտում, իսկ այդպիսի խախտում հայտնաբերելու դեպքում՝ արդյո՞ք այն հանգեցրել է անձի իրավունքների և օրինական շահերի խախտման (...)» (տե՛ս Դավիթ Վարոսյանի վերաբերյալ 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ՇԴ/0005/11/14 որոշման 20-րդ կետը):

Մաս 3. ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐ

3.1. Ընտրական իրավունքի դեմ ուղղված վարչական իրավախախտումներ

Ընտրական իրավահարաբերությունները կարգավորող իրավունքի նորմերի խախտմանն ուղղված վարչական իրավախախտումները նախատեսված են ՎԻՎՕ 40.1-40.15 հոդվածներում, որոնք նախատեսված են «Քաղաքացիների իրավունքների և բնակչության առողջության դեմ ոտնձգվող վարչական իրավախախտումներ» վերնագրով 5-րդ գլխի մեջ: Ստորև հակիրճ ներկայացվում են քաղաքական իրավունքների խախտմանն ուղղված վարչական իրավախախտումների հասկացությունները:

ՎԻՎՕ-ի 40.1-րդ հոդվածի առաջին պարբերությունը նախատեսում է վարչական պատասխանատվություն՝

Քվեարկության և դրան նախորդող օրը հրապարակային ելույթների, հրապարակային միջոցառումների միջոցով քարոզչություն կատարելու համար:

Զանցանք: Այս հոդվածի 1-ին պարբերությունը նախատեսում է մեկ արարք, այն է՝ կոնկրետ ժամանակահատվածում՝ քվեարկության և դրան նախորդող օրը, քարոզչություն կատարելը, որը կատարվել է հրապարակային ելույթների և միջոցառումների միջոցով: Այս հոդվածի 1-ին և 3-րդ պարբերություններով նախատեսված արարքներն ուղղակիորեն արգելված են ԸՕ 19-րդ հոդվածի 1-ին մասի վերջին պարբերությամբ: Ընդ որում, արարքը ենթակա է որակման միայն տվյալ հոդվածի 1-ին պարբերությամբ, եթե քարոզչությունն իրագործվում է բացառապես

հրապարակայաին ելույթների, հրապարակային միջոցառումների միջոցով՝ առանց այս հոդվածի 3-րդ պարբերության մեջ նշված լրատվամիջոցների աջակցության, որի դեպքում առկա է նաև այդ պարբերությամբ նախատեսված առանձին իրավախախտումը: Ընդ որում, եթե 1-ին պարբերությամբ նախատեսված իրավախախտման համար ենթակա է վարչական պատասխանատվության քարոզչություն իրականացրած անձը, ապա 3-րդ պարբերությամբ նախատեսված արարքի համար՝ լրատվական գործունեություն իրականացնող անձը կամ դեկլավարը:

Այսպես, ՎԻՎՕ-ի 40.1-րդ հոդվածի 3-րդ պարբերությունը նախատեսում է վարչական պատասխանատվություն՝

Քվեարկության և դրան նախորդող օրը տպագիր մամուլի, վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ռադիոընկերությունների և հեռուստաընկերությունների (այդ թվում՝ արբանյակային հեռարձակման ժամանակ) միջոցով քարոզչություն կատարելու համար:

Զանգանք: Այս հոդվածի 3-րդ պարբերությունը նախատեսում է մեկ արարք, այն է՝ կոնկրետ ժամանակահատվածում՝ քվեարկության և դրան նախորդող օրը, քարոզչություն կատարելը, որը կատարվել է տպագիր մամուլի, վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ռադիոընկերությունների և հեռուստաընկերությունների (այդ թվում՝ արբանյակային հեռարձակման ժամանակ) միջոցով:

ՎԻՎՕ-ի 40.2-րդ հոդվածը նախատեսում վարչական պատասխանատվություն՝

Ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի անդամի կողմից քվեարկության արդյունքների արձանագրությունը չստորագրելու համար:

Զանցանք: Այս հոդվածով նախատեսված է մեկ արարք, այն է՝ ընտրական կամ հանձնաժողովի անդամի կողմից քվեարկության արդյունքների արձանագրությունը չստորագրելը:

ՎԻՎՕ-ի 40.3.-րդ հոդվածը նախատեսում է վարչական պատասխանատվություն՝

Թեկնածուի (կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի) կողմից նախընտրական հիմնադրամ չբացելու (երբ դրա բացելը Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված պարտականություն է) կամ նախընտրական հիմնադրամում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագիր չներկայացնելու համար:

Զանցանք: Այս հոդվածի համաձայն՝ իրավախախտում է համարվում հոդվածում նշված արարքներից որևիցե մեկի կատարումը:

- թեկնածուի (կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի) կողմից նախընտրական հիմնադրամ չբացելը, եթե վերջիններս ունեն ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված այդպիսի պարտականություն:
- նախընտրական հիմնադրամում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագիր չներկայացնելը:

Նախընտրական հիմնադրամ ձևավորելու կարգը նախատեսված է ԸՕ 26-րդ հոդվածով: Դրա համաձայն՝ հիմնադրամը պետք է բացվի թեկնածուին կամ ընտրական ցուցակը գրանցե-

լու վերաբերյալ որոշումն ընդունվելուց հետո 7 օրվա ընթացքում: Այն դեպքում, երբ հիմնադրամ բացելու պարտականություն ունեցող սուբյեկտը ենթարկվում է վարչական պատասխանատվության՝ այդ հիմնադրամը չբացելու համար, և մինչև նույն է, չի բացում այդ հիմնադրամը դրանից հետո 3 օրվա ընթացքում, իրավասու ընտրական հանձնաժողովը դիմում է դատարան թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու պահանջով: Պետք է նշել նաև, որ կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունները և ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակով առաջադրված թեկնածուներն առանձին նախընտրական հիմնադրամ ձևավորելու իրավունք չունեն:

ՎԻՎՕ-ի 40.4-րդ հոդվածը նախատեսում է վարչական պատասխանատվություն՝

Ընտրական կամ հանրաքվեի փաստաթղթերի պարկը տեղամասային ընտրական հանձնաժողովում սահմանված կարգով չփակելու համար:

Զանցանք: Այս հոդվածով արգելված է մեկ արարք, այն է՝ ընտրական կամ հանրաքվեի փաստաթղթերի պարկը տեղամասային ընտրական հանձնաժողովում սահմանված կարգով չփակելու: ԸՕ 71-րդ հոդվածը կարգավորում է տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության արդյունքների արձանագրությունը կազմելու հետ կապված իրավահարաբերությունները: Այդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեղամասային ընտրական հանձնաժողովը, հիմք ընդունելով ԸՕ 68-րդ հոդվածով սահմանված կարգով կատարված հաշվարկները, կազմում է ընտրական տեղամասում քվեարկության ար-

դյունքների արձանագրություն՝ դրանում նշելով հոդվածով պահանջվող տեղեկությունները: Արձանագրությունը կազմվում է չորս օրինակից, մեկ օրինակը փակցվում է տեղամասային կենտրոնում՝ ընտրողների ցուցակների կողքին, մեկ օրինակը տեղադրվում է պարկում: Դրա մեջ տեղադրվում են նաև այլ առարկաներ և փաստաթղթեր, որոնք նախատեսված են Ընտրական օրենսգրքով: Պարկի վրա պետք է առկա լինի հանձնաժողովի նախագահի ստորագրությունը: Հանձնաժողովի մյուս անդամները և վստահված անձինք ևս իրավունք ունեն ստորագրելու պարկի վրա: Գրանցամատյանում գրառվում են ստորագրողների անուն-ազգանունները, դրվում ստորագրության նմուշները: Ընտրական փաստաթղթերի պարկը տեղամասային ընտրական հանձնաժողովում պետք է փակվի: *Տեղամասային ընտրական հանձնաժողովում այդ պարկը սահմանված կարգով փակելու համար պատասխանատու է հանձնաժողովի նախագահը:* Դա նշանակում է՝ որ ՎԻՎՕ 40.4-րդ հոդվածով նախատեսված արարքը կատարելու համար ենթակա է պատասխանատվության տվյալ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը: Պետք է նաև նշել, որ պարկը փակելու կարգը նախատեսված է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 30.06.2011թ.-ի թիվ 21-Ն որոշմամբ:

ՎԻՎՕ-ի 40.6-րդ հոդվածը նախատեսում է վարչական պատասխանատվություն՝

Ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը սահմանված կարգով չլրացնելու համար:

Զանցանք: Այս հոդվածով արգելված է մեկ արարք, այն է՝ ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը սահմանված կարգով չլրացնելը: Գրանցամատյանը կարևորագույն ընտրա-

կան փաստաթղթերից մեկն է: Օրինակ, դիտորդը, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը, այցելուն պարտավոր են գրանցվել ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում ընտրական հանձնաժողովի նիստերին, ինչպես նաև քվեարկության ընթացքում՝ քվեարկության սենյակում ներկա գտնվելու համար (ԸՕ 32-րդ հոդվածի 4-րդ մաս): Միաժամանակ, դիտորդին, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին, այցելուին տեղամասային կենտրոնից կամ ընտրական հանձնաժողովի նիստերից դուրս հրավիրելու դեպքում ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում կատարվում է համապատասխան գրառում՝ նշելով պատճառները (ԸՕ 32-րդ հոդվածի 5-րդ մաս): Համանման կարգավորումներ նախատեսված են նաև վստահված անձանց վերաբերյալ ԸՕ 34-րդ հոդվածով: Այլ կերպ ասած գրանցամատյանում արտացոլվում է տվյալ հանձնաժողովի աշխատանքը: Դա է պատճառը, որ ԸՕ 46-րդ հոդվածը, որը կարգավորում է ընտրական հանձնաժողովների աշխատանքների կազմակերպումը, նախատեսում է, որ ընտրական հանձնաժողովներն ստանում են վերադաս հանձնաժողովի կնքած գրանցամատյան՝ համարակալված էջերով: Գրանցամատյանին ներկայացվող պահանջները, ինչպես նաև այն լրացնելու կարգը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԸՕ 46-րդ հոդվածի 6-րդ մաս): Ի կատարումն օրենսդրական այս կարգավորման՝ այդ կարգը սահմանված է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 09.11.2016թ.-ի թիվ 131-Ն որոշմամբ:

ՎԻՎՕ-ի 40.7-րդ հոդվածով նախատեսված են մի շարք արարքներ, որոնք խախտում են նախընտրական քարոզչության իրականացման կարգը զանգվածային լրատվության միջոցներ

րով: Դա է պատճառը, որ պատասխանատվության ենթակա է լրատվական գործունեություն իրականացնողը, իսկ 7-րդ պարբերությամբ նախատեսված արարքի համար՝ լրատվական գործունեություն իրականացնող անձը կամ ղեկավարը: Նախընտրական քարոզչության կարգը նախատեսված է ԸՕ 4-րդ գլխի մեջ:

ՎԻՎՕ-ի 40.7-րդ հոդվածի 1-ին պարբերությունը նախատեսում է վարչական պատասխանատվություն՝

Ձանգվածային լրատվության միջոցներով, բացառությամբ կուսակցությունների հիմնադրած մամուլի միջոցների, թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական քարոզչության իրականացման համար հավասար պայմաններ՝ եթերաժամ կամ ծավալ, սակագին և այլն չապահովելու համար:

Զանցանք: Այս հոդվածի 1-ին պարբերությամբ արգելված է մեկ արարք, այն է՝ թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական քարոզչության իրականացման համար հավասար պայմաններ՝ եթերաժամ կամ ծավալ, սակագին և այլն չապահովելը զանգվածային լրատվության միջոցներով, բացառությամբ՝ կուսակցությունների հիմնադրած մամուլի միջոցների:

ՎԻՎՕ-ի 40.7-րդ հոդվածի 3-րդ պարբերությունը նախատեսում է վարչական պատասխանատվություն՝

Նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում հեռուստառադիոընկերությամբ (հեռուստաընկերությամբ կամ ռադիոընկերությամբ) հեռարձակ-

վող լրատվական հաղորդումներում թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից իրականացվող նախընտրական քարոզչության վերաբերյալ ակնհայտ կողմնակալ և (կամ) գնահատականներով տեղեկատվություն ներկայացնելու համար:

Զանցանք: Այս հոդվածի 3-րդ պարբերությամբ արգելված է մեկ արարք, այն է՝ կոնկրետ ժամանակահատվածում՝ նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում, հեռուստառադիոընկերությամբ (հեռուստաընկերությամբ կամ ռադիոընկերությամբ) հեռարձակվող լրատվական հաղորդումներում հոդվածի մեջ նշված անձանց վերաբերյալ ակնհայտ կողմնակալ և (կամ) գնահատականներով տեղեկատվություն ներկայացնելը:

ՎԻՎՕ-ի 40.7-րդ հոդվածի 5-րդ պարբերությունը նախատեսում է վարչական պատասխանատվություն՝

Օրենքով սահմանված կարգով որպես թեկնածու գրանցվելուց հետո՝ մինչև ընտրությունների ավարտն ընկած ժամանակահատվածը, հեռուստառադիոընկերությունների աշխատակիցների կողմից հեռուստառադիոընկերությամբ (հեռուստաընկերությամբ կամ ռադիոընկերությամբ) ընտրությունները լուսաբանելը և (կամ) հեռուստառադիոհաղորդում (հեռուստահաղորդում կամ ռադիոհաղորդում) վարելու համար:

Զանցանք: Այս հոդվածի 5-րդ պարբերությամբ արգելված է մեկ արարք, այն է՝ կոնկրետ ժամանակահատվածում՝ այն բա-

նից հետո երբ հոդվածի մեջ նշված իրավախախտը օրենքով սահմանված կարգով գրանցվել է որպես թեկնածու, նրա կողմից ընտրությունները լուսաբանելը և (կամ) հեռուստառադիոհաղորդում (հեռուստահաղորդում կամ ռադիոհաղորդում) վարելը:

ՎԻՎՕ-ի 40.7-րդ հոդվածի 7-րդ պարբերությունը նախատեսում է վարչական պատասխանատվություն՝

Նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում նախընտրական քարոզչությանը վերաբերող հեռուստառադիոհաղորդումները (հեռուստահաղորդումները կամ ռադիոհաղորդումները) առևտրային գովազդով ընդմիջելու համար»:

Զանցանք: Այս հոդվածի 7-րդ պարբերությամբ արգելված է մեկ արարք, այն է՝ կոնկրետ ժամանակահատվածում՝ նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում, նախընտրական քարոզչությանը վերաբերող հեռուստառադիոհաղորդումները (հեռուստահաղորդումները կամ ռադիոհաղորդումները) առևտրային գովազդով ընդմիջելը:

ՎԻՎՕ-ի 40.8-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է վարչական պատասխանատվություն՝

Քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելու իրավունք չունեցող անձանց կողմից նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելը և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածելու համար:

Զանցանք: Այս հոդվածի 1-ին մասով արգելված է մեկ արարք, այն է՝ կոնկրետ ժամանակահատվածում՝ քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում՝ նշված անձանց կողմից նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելը և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածելը:

ՎԻՎՕ-ի 40.8-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է վարչական պատասխանատվություն՝

Նախընտրական կամ հանրաքվեի քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցները, տարածքները, տրանսպորտային և կապի միջոցները, նյութական և մարդկային ռեսուրսները, բացառությամբ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումների, օգտագործելու համար:

Զանցանք: Այս հոդվածի 2-րդ մասով արգելված է մեկ արարք, այն է՝ նշված նպատակով նշված առարկաները օգտագործելը: Նպատակն է՝

- նախընտրական կամ հանրաքվեի քարոզչությունը: Առարկաներն են՝
- ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական

միջոցները, տարածքները, տրանսպորտային և կապի միջոցները, նյութական և մարդկային ռեսուրսները, բացառությամբ՝ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պետական պաշտպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումների:

ՎԻՎՕ-ի 40.9-րդ հոդվածի առաջին պարբերությունը նախատեսում է վարչական պատասխանատվություն՝

Նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) վարկանիշների, ինչպես նաև հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ սոցիոլոգիական հարցում հրապարակելիս դրանում օրենքով նախատեսված տեղեկությունները չնշելու համար:

Զանգանք: Այս հոդվածի 1-ին պարբերությամբ արգելված է մեկ արարք, այն է՝ կոնկրետ ժամանակահատվածում, այն է՝ նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում՝ թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) վարկանիշների, ինչպես նաև հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ սոցիոլոգիական հարցում հրապարակելիս, դրանց մեջ այն տեղեկությունները չնշելը, որոնք նախատեսված են օրենքով: ԸՕ 22-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունը նախատեսում է՝

«Թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների վարկանիշների վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքներ հրապարակելիս հարցումն իրականացնող կազմակերպությունը պարտավոր է նշել հարցման ժամկետները, հարցվողների թիվը և ընտրանքի ձևը, հավաքման ձևը և վայրը, հարցի ճշգրիտ ձևակերպումը, հնարավոր սխալի վիճակագրական գնահատականը և պատվիրատունին»:

ՎԻՎՕ-ի 40.9-րդ հոդվածի 3-րդ պարբերությունը նախատեսում է վարչական պատասխանատվություն՝

Քվեարկության նախորդ օրը, ինչպես նաև քվեարկության օրը՝ մինչև ժամը 20.00-ն, վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստատեսությամբ, ռադիոյով կամ տպագիր մամուլով թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների), ինչպես նաև հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքները, ինչպես նաև դրանց վերաբերյալ տեղեկատվություն հրապարակելու համար»:

Զանցանք: Այս հոդվածի 3-րդ պարբերությամբ արգելված է մեկ արարք, այն է՝ կոնկրետ ժամանակահատվածում, այն է՝ Քվեարկության նախորդ օրը, ինչպես նաև քվեարկության օրը՝ մինչև ժամը 20.00-ն, վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստատեսությամբ, ռադիոյով կամ տպագիր մամուլով նշված անձանց, հարցի վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքները, ինչպես նաև դրանց վերաբերյալ տե-

դեկատվություն հրապարակելը: Այս պարբերությամբ նախատեսված արարքն ուղղակիորեն արգելված է ՀՕ 22-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ:

ՎԻՎՕ-ի 40.9-րդ հոդվածի 1-ին և 3-րդ պարբերություններով նախատեսված արարքներն ունեն առավել վտանգավոր տեսակ: Մասնավորապես, 5-րդ պարբերությունը նախատեսում է առավել խիստ պատասխանատվություն՝ միևնույն ընտրության (հանրաքվեի) ժամանակ նույն խախտումը մեկից ավելի անգամ կատարելու համար:

ՎԻՎՕ-ի 40.11-րդ հոդվածի առաջին պարբերությունը նախատեսում է վարչական պատասխանատվություն՝

Նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով նախատեսված ժամանակահատվածում քարոզչական տպագիր նյութի պատվիրատուի, տպագրող կազմակերպության և տպաքանակի վերաբերյալ տեղեկություններ չպարունակող քարոզչական տպագիր նյութեր տարածելու համար:

Զանգանք: Այս հոդվածի 1-ին պարբերությամբ արգելված է մեկ արարք, այն է՝ կոնկրետ ժամանակահատվածում, այն է՝ նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով նախատեսված ժամանակահատվածում, այնպիսի քարոզչական տպագիր նյութեր տարածելու համար, որոնք չեն պարունակում հոդվածում նշված տեղեկություններ, դրանք են՝

- քարոզչական տպագիր նյութի պատվիրատուի մասին,
- տպագրող կազմակերպության մասին,
- տպաքանակի մասին:

ՎԻՎՕ-ի 40.11-րդ հոդվածի երրորդ պարբերությունը նախատեսում է վարչական պատասխանատվություն՝

Նախընտրական կամ հանրաքվեի քարոզչության իրականացման համար օրենքով նախատեսված ժամանակահատվածում քարոզչական պաստառներ փակցնելու համար առանձնացված տեղերում փակցված քարոզչական պաստառները դիտավորյալ պոկելու, պատռելու կամ դրանց վրա գրառումներ կատարելու համար:

Ջանցանք: Այս հոդվածի 2-րդ պարբերությամբ արգելված է մի քանի արարք, դրանք են՝ կոնկրետ ժամանակահատվածում, այն է՝ նախընտրական կամ հանրաքվեի քարոզչության իրականացման համար օրենքով նախատեսված ժամանակահատվածում, հոդվածի մեջ նշված վայրում փակցված քարոզչական պաստառները՝

- պոկելը,
- պատռելը
- կամ դրանց վրա գրառումներ կատարելը:

Ընդ որում, արարքն առաջացնում է վարչական պատասխանատվություն, եթե կատարված է դիտավորությամբ:

ՎԻՎՕ-ի 40.12-րդ հոդվածը նախատեսում է վարչական պատասխանատվություն՝

Թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտման դեպքում ընտրական հանձնաժողովի խախտումը վերացնելու որոշման պահանջները՝ դրանում նշված ժամկետներում չկատարելու կամ այդ մասին ընտրական հանձնաժողովին գրավոր չտեղեկացնելու համար:

Զանգանք: Այս հոդվածով արգելված է երկու այլընտրանքային արարք: Մասնավորապես, հնարավոր է, որ տվյալ ընտրական հանձնաժողովի կողմից կայացվի որոշում, որով հանձնաժողովը պահանջում է թեկնածուներից, կուսակցություններից, կուսակցությունների դաշինքներից՝ վերացնել իրենց կողմից թույլ տրված նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտումները: Տվյալ հոդվածով նախատեսված է վարչական պատասխանատվություն, եթե նշված անձինք չեն կատարում ընտրական հանձնաժողովի որոշման պահանջները: Միաժամանակ պետք է նշել, որ ենթադրվում է, ՎԻՎՕ այս հոդվածի 1-ին պարբերությունը պարունակում է վրիպակ: Մասնավորապես, *«դրանում նշված ժամկետներում չկատարելը կամ այդ մասին ընտրական հանձնաժողովին գրավոր չտեղեկացնելը»* արտահայտության փոխարեն պետք է նախատեսված լիներ՝ *«դրանում նշված ժամկետներում չկատարելը կամ կատարելու դեպքում այդ մասին ընտրական հանձնաժողովին գրավոր չտեղեկացնելը»*: Հակառակ դեպքում, ստացվում է, որ տվյալ հոդվածով նախատեսված է վարչական պատասխանատվություն, եթե նշված անձինք չեն տեղեկացնում հանձնաժողովին, որ չեն կատարել այդ պահանջները որոշմամբ նախատեսված ժամկետում, իսկ եթե տեղեկացրել են որոշման պահանջները չկատարելու մասին, պատասխանատվությունը բացակայում է, ինչն անտրամաբանական է: Այս մոտեցումը բխում է նաև այն իրավունքի նորմերի բովանդակությունից, որոնց պաշտպանությանն է ուղղված տվյալ զանցանքի ամրագրումը: Այսպես, այս հոդվածով նախատեսված արարքի համար վարչական պատասխանատվություն սահմանելը կոչված է ապահովել ընտրական օրենսգրքի որոշակի իրավունքի նորմերի պաշտպանու-

թյունը: Մասնավորապես, ԸՕ 19-րդ հոդվածի 7-8-րդ մասերը նախատեսում են, որ

- «Ընտրական հանձնաժողովները հսկում են նախընտրական քարոզչության՝ սույն օրենսգրքով կամ օրենսգրքի հիման վրա ընդունված իրավական ակտերով սահմանված կարգի պահպանումը: Թեկնածուների, ընտրությունների մասնակցող կուսակցությունների կողմից այդ կարգի խախտման դեպքում թեկնածուին, ընտրությունների մասնակցող կուսակցության ընտրական ցուցակը գրանցած ընտրական հանձնաժողովը դիմում է իրավասու մարմիններ դրանք կանխելու նպատակով կամ կիրառում նախազգուշացում խախտում թույլ տված թեկնածուի, ընտրությունների մասնակցող կուսակցության նկատմամբ՝ տալով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ, որը չի կարող գերազանցել 3 օրը: *Թեկնածուն, ընտրություններին մասնակցող կուսակցությունը պարտավոր են որոշմամբ նշված ժամկետում վերացնել խախտումը (խախտման հետևանքները) և այդ մասին գրավոր տեղեկացնել ընտրական հանձնաժողովին:*
- 8. Եթե առկա է նախընտրական քարոզչության սահմանված կարգի այնպիսի խախտում, որը կրում է շարունակական բնույթ, և թույլ տրված խախտումը կարող է էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա, կամ թույլ տրված խախտման հետևանքները հնարավոր չէ վերացնել, և թույլ տրված խախտումը կարող է էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա, ապա թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակը գրանցած

ընտրական հանձնաժողովը դիմում է դատարան՝ թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար: Դատարանը թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած կարող է ճանաչել, եթե հանգում է այն եզրակացության, որ խախտումը կատարվել կամ ուղղորդվել է թեկնածուի կամ ընտրություններին մասնակցող կուսակցության կողմից»:

ՎԻՎՕ-ի 40.12-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված արարքն ունի առավել վտանգավոր տեսակ: Մասնավորապես, 3-րդ պարբերությունը նախատեսում է առավել խիստ պատասխանատվություն՝ միննույն ընտրության ժամանակ նույն խախտումը նույն սուբյեկտի կողմից մեկից ավելի անգամ կատարելու համար:

ՎԻՎՕ-ի 40.13-րդ հոդվածը նախատեսում է վարչական պատասխանատվություն՝

Տեղամասային ընտրական հանձնաժողովին տրամադրվող՝ ընտրողների գրանցում իրականացնող տեխնիկական սարքավորումը սպասարկող անձի (մասնագետի) կողմից քվեարկության օրն իր լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Զանգանք: Այս հոդվածով արգելված է երկու այլընտրանքային արարք: Մասնավորապես, տեղամասային ընտրական հանձնաժողովներին տրամադրվում են համապատասխան տեխնիկական սարքավորումներ, որոնք իրականացնում են ընտրողների գրանցում: Բնականաբար, անհրաժեշտ է ապահո-

վել այդ սարքավորումների անխափան աշխատանքը քվեարկության օրը: Այդ նպատակով պատվիրվում են համապատասխան ծառայություններ մասնագետների կողմից, որոնք պետք է սպասարկեն սարքավորումների աշխատանքը: Եթե անձը չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում իր լիազորությունները քվեարկության օրը, նա ենթակա է վարչական պատասխանատվության: Ընդ որում, սույն հոդվածով արարքը որակելու համար անհրաժեշտ է, որ անձի լիազորությունները սահմանված լինեն որևիցե պայմանագրով կամ իրավական ակտով: Ընտրական օրենսգիրքն առանձին հոդվածով չի սահմանում տեխնիկական սարքավորման հասկացությունը: Այս հասկացության բովանդակությունը կարելի է դուրս բերել ԸՕ 11-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներից, որի համաձայն՝

«6. Ընտրողների ցուցակները լիազոր մարմնի կողմից կազմվում են նաև էլեկտրոնային եղանակով, հատուկ ծրագրային ապահովմամբ: Էլեկտրոնային ցուցակները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած ձևաչափով և կարգով նախապես ներբեռնվում են համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովին տրամադրվող ընտրողների գրանցում իրականացնող տեխնիկական սարքավորման մեջ (այսուհետ՝ տեխնիկական սարքավորում) և պարունակվում են...»

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընդունել է մի շարք որոշումներ, որոնք կարգավորում են տեխնիկական սարքավորումների հետ կապված, ինչպես նաև դրանք սպասարկող անձանց ընտրության վերաբերյալ իրավահարաբերություններ,

դրանք են 11.01.2017թ.-ի թիվ 5-Ն, 22.02.2017թ.-ի թիվ 45-Ն, 47-ն և 44-Ն որոշումները:

ՎԻՎՕ-ի 40.14-րդ հոդվածը նախատեսում է վարչական պատասխանատվություն՝

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի կողմից տեղամասային ընտրական հանձնաժողովին տրամադրվող՝ ընտրողների գրանցում իրականացնող տեխնիկական սարքավորումը սպասարկող անձին փոխարինելուց հրաժարվելու համար:

Զանցանք: Այս հոդվածով արգելված է մեկ արարք: Մասնավորապես, տեղամասային ընտրական հանձնաժողովներին տրամադրվում են համապատասխան տեխնիկական սարքավորումներ, որոնք օգտագործվում են՝ ընտրողների գրանցում իրականացնելու նպատակով: Բնականաբար, անհրաժեշտ է ապահովել այդ սարքավորումների անխափան աշխատանքը քվեարկության օրը: Այդ նպատակով տեղամասային ընտրական հանձնաժողովներին տրամադրվում են նաև համապատասխան մասնագետներ, որոնք պետք է սպասարկեն սարքավորումների աշխատանքը: Եթե տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը հրաժարվում է փոխարինել այդ անձին, նա ենթակա է վարչական պատասխանատվության:

ՎԻՎՕ-ի 40.15-րդ հոդվածի առաջին պարբերությունը նախատեսում է վարչական պատասխանատվություն՝

Քվեարկության նախապատրաստման, քվեարկության և քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ տեղամասային կենտրոնում կամ քվեարկության սենյակում ներկա լինելու իրավունք

չունեցող անձի կողմից տեղամասային կենտրոն պարբերաբար մտնելու (եթե գործողությունը շարունակվել է բանավոր նախազգուշացումից հետո) կամ տեղամասային կենտրոնում ապօրինի գտնվելու (եթե գործողությունը շարունակվել է տեղամասային կենտրոնը լքելու բանավոր պահանջը ներկայացնելուց հետո) համար:

Զանգանք: Այս պարբերությամբ արգելված են երկու այլընտրանքային արարք, այն է՝ կոնկրետ ժամանակահատվածում, այն է՝ քվեարկության նախապատրաստման, քվեարկության և քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ, այն անձի կողմից, որը չունի իրավունք՝ ներկա լինել տեղամասային կենտրոնում կամ քվեարկության սենյակում, տեղամասային կենտրոն պարբերաբար մտնելը, եթե գործողությունը շարունակվել է բանավոր նախազգուշացումից հետո կամ այդ անձի կողմից տեղամասային կենտրոնում ապօրինի գտնվելը, եթե գործողությունը շարունակվել է տեղամասային կենտրոնը լքելու բանավոր պահանջը ներկայացնելուց հետո: Այլ կերպ ասած, հնարավոր է երկու իրավիճակ, երբ նշված անձից պահանջում են՝ հեռանալ և այլևս մուտք չգործել տեղամասային կենտրոն, նա պարբերաբար մուտք է գործում և դուրս գալիս կամ ներկա է գտնվում տևական ժամանակ: Երկու դեպքում էլ հնարավոր է՝ նրանից պահանջեն հեռանալ կամ այլևս մուտք չգործել: Պահանջը չկատարելու դեպքում առաջանում է վարչական պատասխանատվություն: Ընդ որում, խոսքն այն պահանջի մասին է, որը ներկայացվում է իրավասու անձի կողմից:

ՎԻՎՕ-ի 40.15-րդ հոդվածի երկրորդ պարբերությունը նախատեսում է վարչական պատասխանատվություն՝

Քվեարկության սենյակում ներկա լինելու իրավունք ունեցող անձի կողմից օրենքով սահմանված կարգով իր վկայականը դիտավորությամբ տեսանելի ձևով չկրելու համար:

Զանգանք: Այս պարբերությամբ արգելված է արարք, այն է՝ այն անձի կողմից իր վկայականը օրենքով սահմանված կարգով տեսանելի ձևով չկրելը, ով իրավունք ունի ներկա լինել քվեարկության սենյակում: Ընդ որում, վարչական պատասխանատվություն առաջանում է այն դեպքում, երբ անձն այդ արարքը կատարել է դիտավորությամբ, այսինքն՝ երբ անձը գիտակցում է, որ իր վկայականն օրենքով սահմանված կարգով տեսանելի ձևով չի կրում: ՎԻՎՕ այս հոդվածով նախատեսված արարքը կոչված է ապահովել Ընտրական օրենսգրքով նախատեսված որոշակի իրավունքի նորմերի պաշտպանությունը: Մասնավորապես, ԸՕ 32-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասությունը նախատեսում է, որ դիտորդը, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը, այցելուն պարտավոր են ընտրական հանձնաժողովում, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում ներկա գտնվելու համար պարտադիր կարգով տեսանելի ձևով կրել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից տրված սահմանված նմուշի վկայականը: Բացի դրանից, ԸՕ 46-րդ հոդվածի 8-րդ մասը նախատեսում է, որ ընտրական հանձնաժողովների անդամներն ընտրական հանձնաժողովների նիստերին, քվեարկության օրը քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք, մասնագետը (բացառությամբ քվեարկողների և տեղամասային կենտրոնում ծառայություն իրականացնող ոստիկանության ծառայողների) վերնազգեստի վրա պարտադիր կարգով տեսա-

նելի ձևով կրում են ներկա գտնվելու իրավունքը հավաստող վկայական: Հանձնաժողովի նախագահին արգելում է ընտրական հանձնաժողովներում, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև վերնագգեստի վրա առանց համապատասխան վկայականի անձանց ներկայությունն ընտրական հանձնաժողովում (քվեարկության սենյակում):

3.2. Վարչական պատասխանատվության ենթարկելու կարգը

Այն դեպքում, երբ հաճախորդը փաստաբանին հայտնում է այնպիսի տեղեկություններ, որոնք փաստաբանի գնահատմամբ՝ իրենց մեջ առերևույթ պարունակում են վարչական իրավախախտման հատկանիշներ, անհրաժեշտ է ապահովել, որ իրավախախտումը կատարած անձինք ենթարկվեն վարչական պատասխանատվության, եթե դա բխում է հաճախորդի շահերից: Այս առթիվ պետք է նշել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը նախատեսում է իրավունքի նորմեր, որոնք կարգավորում են այն հարցը, թե ինչպես է անձը ենթարկվում վարչական պատասխանատվության՝ ընտրական իրավունքների խախտմանն ուղղված իրավախախտում կատարելու դեպքում: Մասնավորապես, այսպիսի իրավախախտումներ կատարելու վերաբերյալ գործերը քննվում են ՀՀ վարչական դատարանի կողմից: Այսինքն, դատարանն է այն մարմինը, որն իրավասու է անձին ենթարկել վարչական պատասխանատվության այսպիսի զանցանքների համար: ՎԻՎՕ 223-րդ հոդվածի

6-րդ կետով, ինչպես նաև ՎԴՕ 3-րդ հոդվածի 2.1.-րդ մասով նախատեսված է այն սուբյեկտների շրջանակը, որոնք իրավունք ունեն դիմել դատարան՝ խնդրանքով՝ ենթարկել այն անձին վարչական պատասխանատվության, որն ըստ իրենց ունեցած տվյալների կատարել է վարչական իրավախախտում՝ նախատեսված ՎԻՎՕ 40.1-40.4 և 40.6-40.15 հոդվածներով: Այդ սուբյեկտներն են՝

- վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու իրավասություն ունեցող ընտրական հանձնաժողովը,
- ընտրություններին մասնակցող կուսակցությունը,
- կուսակցությունների դաշինքը,
- համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն,
- կամ այդ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունները,
- ինչպես նաև հանրաքվեի ժամանակ՝ քարոզչության կողմը:

Ինչպես կարելի է նկատել Վարչական դատարան դիմելու իրավունք ունեն ինչպես վարչական իրավախախտումն արձանագրած ընտրական հանձնաժողովները, այնպես էլ՝ այլ անձինք: Տվյալ ընտրական հանձնաժողովը չի կարող դիմել դատարան, եթե չի արձանագրել խախտումը: Ինչ վերաբերում է այլ անձանց, ապա ՎԻՎՕ 254-րդ հոդվածի վերջին պարբերությունը նախատեսում է, որ նրանք իրավունք ունեն՝ ներկայացնել հայցադիմում Վարչական դատարան՝ անկախ այն հանգամանքից՝ իրավասու ընտրական հանձնաժողովի կողմից կազմվել է արձանագրություն, թե ոչ: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր

դեպքում համապատասխան ընտրություններին մասնակցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները, թեկնածուները կամ այդ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև հանրաքվեի ժամանակ քարոզչության կողմերն ունեն ընտրության հնարավորություն՝ անմիջապես դիմել Վարչական դատարան, թե՛ սկզբում դիմել իրավասու ընտրական հանձնաժողով՝ խնդրելով վերջինիս կազմել արձանագրություն իրավախախտում կատարելու վերաբերյալ: Այն, թե որ ընտրական հանձնաժողովն է իրավասու՝ կազմել այդ արձանագրությունը, կարգավորված է Ընտրական օրենսգրքով: Այսպես օրինակ, տվյալ կուսակցության, թեկնածուի նախընտրական քարոզչության կարգի պահպանումը հսկվում է այն ընտրական հանձնաժողովի կողմից, որը գրանցել է տվյալ թեկնածուին, ընտրական ցուցակը, կամ այն խախտումները, որոնք տեղ են գտել համապատասխան տեղամասում, պետք է արձանագրվեն տվյալ տեղամասային հանձնաժողովի կողմից և այլն:

Խախտման արձանագրում

Իրավասու ընտրական հանձնաժողովը պարտավոր է արձանագրել հայտնաբերված խախտումները: ՎԻՎՕ 255-րդ հոդվածը նախատեսում է այն պահանջները, որոնց պետք է բավարարի, առհասարակ, վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրության բովանդակությունը: Այն դեպքում, երբ այդ պահանջները պահպանված չեն, առկա են հիմքեր՝ արձանագրման իրավաչափությունը վիճարկելու համար: Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ նշվում է՝ դրա կազմելու ամսաթիվն ու տեղը, արձանագրու-

թյունը կազմող անձի պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը. տեղեկություններ խախտողի անձի մասին. վարչական իրավախախտման կատարման տեղը, ժամանակը և էությունը. այն նորմատիվ ակտը, որը պատասխանատվություն է նախատեսում տվյալ իրավախախտման համար. վկաների և տուժողների ազգանունները և հասցեները, եթե այդպիսիք կան. խախտողի բացատրությունը. գործի լուծման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ: Արձանագրությունը ստորագրում են այն կազմող անձը և վարչական իրավախախտում կատարած անձը. վկաների և տուժողների առկայության դեպքում արձանագրությունը կարող են ստորագրել նաև այդ անձինք: Եթե իրավախախտում կատարած անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, դրանում այդ մասին նշում է կատարվում: Իրավախախտում կատարած անձն իրավունք ունի ներկայացնելու արձանագրությանը կցվող բացատրություններ և դիտողություններ արձանագրության բովանդակության առթիվ, ինչպես նաև շարադրելու այն ստորագրելուց իր հրաժարվելու շարժառիթները (ՎԻՎՕ 255-րդ): Անմիջապես տեղամասում հայտնաբերված խախտումներն արձանագրվում են գրանցամատյանի մեջ:

Հայցադիմում՝ Վարչական դատարան

ՎԴՕ 3-րդ հոդվածի 2.1.-րդ մասը նախատեսում է, որ՝

«Վարչական դատարան կարող են դիմել նաև ընտրություններին մասնակցող կուսակցությունը, կուսակցությունների դաշինքը, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն կամ այդ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմա-

կերպությունները, ինչպես նաև հանրաքվեի ժամանակ՝ քարոզչության կողմը՝ սույն օրենսգրքի 29-րդ գլխով սահմանված կարգով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերով»:

ՎԴՕ 29-րդ գլուխը նախատեսում է վարչական դատավարության հատուկ վարույթի տեսակ, որը կարգավորում է դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ իրավահարաբերությունները: Մասնավորապես, այս գլխով նախատեսված են այն առանձնահատկությունները, որոնք առկա են այսպիսի գործերի դեպքում: Այսպես օրինակ, նախևառաջ պետք է նշել, որ հայցադիմումն անհրաժեշտ է ներկայացնել հատուկ ժամկետներում, որոնք սահմանված են ՎԻՎՕ 37-րդ հոդվածով: Այդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝

«Վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի»:

Խնդրո առարկա իրավախախտումներից միայն ՎԻՎՕ 40.3-րդ հոդվածով նախատեսված զանցանքի համար է նախատեսված բացառություն, որի համաձայն՝

«Սույն օրենսգրքի 40.3-րդ, 189.13-րդ, 189.14-րդ, 189.15-րդ և 189.16-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժը կարող է նշանակվել իրա-

*վախախտումը հայտնաբերվելուց հետո՝ երկու ամս-
վա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան իրավախախ-
տումը կատարվելուց հետո՝ երկու տարվա ընթաց-
քում, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով
նախատեսված դեպքերի»:*

4-րդ մասով, իր հերթին, նախատեսված է հետևյալ բացառու-
թյունը՝

*«Եթե վարչական իրավախախտումը հնարավոր
չէր հայտնաբերել առանց համապատասխան ստու-
գումներ կատարելու, ապա վարչական տույժը կա-
րող է նշանակվել վարչական իրավախախտումը
ստուգմամբ բացահայտելու օրվանից հետո՝ ոչ ուշ,
քան երկու ամսվա ընթացքում»:*

Ինչպես երևում է վերոգրյալից, կարևոր է այն հարցի պարզա-
բանումը, թե ինչն է հիմք ընդունվում վարչական իրավախախ-
տում կատարելու ժամանակը որոշելու համար: Այդ առթիվ
Վճռաբեկ դատարանի ՎԴ/8645/05/11 որոշումը պարզաբանում
է, որ

*«Վերոհիշյալ նորմերի համադրված վերլուծու-
թյան արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է,
որ վարչական իրավախախտումը կատարելու ժա-
մանակը որոշելու համար հիմք պետք է ընդունվի
իրավախախտման վերաբերյալ արձանագրությու-
նում նշված՝ իրավախախտման կատարման ժամա-
նակը: Իսկ Վարչական իրավախախտումների վերա-
բերյալ ՀՀ օրենսգրքի 254-րդ հոդվածով նախատես-
ված դեպքերում, այն է՝ 170.5-րդ, 189.7-րդ հոդվածնե-
րով, 198.2-րդ հոդվածի հինգերորդ մասով և 257-րդ*

հողվածով նախատեսված դեպքերում, երբ արձանագրություն չի կազմվում, վարչական իրավախախտում կատարելու ժամանակը որոշվում է՝ հիմք ընդունելով օրենսգրքի 251-րդ հոդվածում նշված մյուս ապացույցները»:

Նկատի ունենալով, որ ինչպես նշվեց, հնարավոր է խնդրո առարկա իրավախախտումների դեպքում ստեղծվի այնպիսի իրավիճակ, երբ ընտրական հանձնաժողովը մերժում է խախտումն արձանագրելու հարցում՝ գտնելով, որ իրավախախտում առկա չէ, կամ ՎԴՕ 3-րդ հոդվածում նշված սուբյեկտներից որևիցե մեկը, չդիմելով ընտրական հանձնաժողովին, անմիջապես դիմում է Վարչական դատարան՝ պահանջելով պատասխանատվության ենթարկել իր գնահատմամբ իրավախախտում կատարած անձին: Այս դեպքում, ստեղծվում է ՎԻՎՕ 254-րդ հոդվածի նախավերջին պարբերությամբ նախատեսված դեպքերին (այն է՝ 170.5-րդ, 189.7-րդ հոդվածներով, 198.2-րդ հոդվածի հինգերորդ մասով և 257-րդ հոդվածով նախատեսված դեպքեր) համանման իրավիճակ, քանի որ առկա չէ համապատասխան արձանագրություն: Ուստի, հետևելով Վճռաբեկ դատարանի մոտեցմանը, կարելի է եզրահանգել, որ այս դեպքում վարչական իրավախախտում կատարելու ժամանակը որոշվում է՝ հիմք ընդունելով ՎԻՎՕ 251-րդ հոդվածում նշված մյուս ապացույցները, այլ ոչ թե արձանագրությունը, որը տվյալ դեպքում բացակայում է: Ասվածը վերաբերում է նաև վարչական իրավախախտումը հայտնաբերելու ժամանակահատվածին: Մասնավորապես, եթե առկա է արձանագրություն, ապա իրավախախտումը հայտնաբերելու ժամանակը պետք է համարվի, արձանագրության կազմման ժամանակահատվածը, իսկ արձանագ-

րության բացակայության դեպքում՝ հայտնաբերման ժամանակահատվածը որոշելու հարցը լուծվում է ՎԻՎՕ 251-րդ հոդվածում նշված մյուս ապացույցներով:

Հուշագրավ է ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը վարձական գործերով ապացույցների վերաբերյալ: Այն է՝

«Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրներն իրականացվում են նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ապացուցման միջոցով, որն իր մեջ ներառում է նաև ապացույցների բացահայտումը, հավաքագրումը և դրանց պատշաճ ձևակերպումը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարությունը ապացույցներ են համարվում այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով հաստատում են գործի հանգամանքները, վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունն այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Սակայն ցանկացած փաստական տվյալ չէ, որ կարող է համարվել վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի ապացույց: Փաստական տվյալները կարող են համարվել ապացույց, եթե առաջին՝ բովանդակում են տվյալներ վարչական իրավախախտման կամ դրա բացակայության մասին, տվյալ անձի մեղավորության կամ անմեղության մասին, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշա-

նակություն ունեցող այլ հանգամանքների մասին, և երկրորդ՝ այդ փաստական տվյալների բացահայտման, հավաքագրման և ձևակերպման գործընթացները պետք է համապատասխանեն օրենսդրության պահանջներին: Այսպիսով, օրենսդիրը միանշանակ պարտավորեցնում է վարչական մարմինն պարզելու գործի փաստական հանգամանքները և բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկել դրանք: Վարչական մարմինն օրենքով սահմանված կարգով պետք է պարզի այն բոլոր փաստական հանգամանքները, որոնք, ըստ համապատասխան օրենքի, անհրաժեշտ են կոնկրետ վարչական ակտն ընդունելու համար: Վճռաբեկ դատարանը վերը նշված իրավանդությունների և դրանց վերլուծության հիման վրա գտնում է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս համապատասխան վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է արդյո՞ք վարչական իրավախախտումը, և արդյո՞ք անձը մեղավոր է այն կատարելու մեջ: Նշված հարցերը պարզելու համար վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պետք է ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ և ղեկավարվելով օրենքով՝ գնահատի գործով ձեռք բերված ապացույցները: Վերը նշվածն իրականացնելու համար համապատասխան վարչական մարմինը (պաշտոնատար անձը) վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելիս պետք է պատշաճ ձևով լուծի նաև հետևյալ հարցը՝ արդյո՞ք օրենքին համապատաս-

խան են կազմվել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի արձանագրությունը և մյուս նյութերը» (տե՛ս Սուրեն Միմոնյանն ընդդեմ Երևանի քաղաքապետաանի վերաբերյալ 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ ՎԴ/4842/05/12 որոշումը):

Հաջորդ առանձնահատկությունը վերաբերում է հայցադիմումին ներկայացվող պահանջներին (ՎԴՕ 215-րդ հոդված): Այն դեպքում, երբ Վարչական դատարան է դիմել իրավասու ընտրական հանձնաժողովը՝ անձին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով, ի լրումն ՎԴՕ 73-րդ հոդվածով ներկայացվող պահանջների, հայցադիմումը նաև պետք է ներառի՝

- տեղեկություններ՝ վարչական իրավախախտման մասին արձանագրությունը կազմելու համար հիմք հանդիսացած գործողությունների կատարման վայրի և ժամանակի մասին.
- վարչական իրավախախտման մասին արձանագրությունը կազմած անձի պաշտոնը, անունը, ազգանունը.
- տեղեկություններ այն անձի մասին, որի նկատմամբ կազմվել է վարչական իրավախախտման մասին արձանագրությունը.
- այն օրենքի դրույթները, որոնք վարչական պատասխանատվություն են նախատեսում վարչական իրավախախտման մասին արձանագրություն կազմելու համար հիմք հանդիսացած գործողությունների կատարման համար.
- հայցվորի պահանջը վարչական պատասխանատվության ենթարկելու մասին:

Ավելին, այս դեպքում հայցադիմումին կցվում են վարչական իրավախախտման մասին արձանագրությունը և արձանագրությանը կցվող փաստաթղթերը:

Այն դեպքում, երբ այսպիսի հայցադիմում ներկայացվում է ՎԴՕ 3-րդ հոդվածի մեջ նշված անձանց կողմից, ի լրումն սույն օրենսգրքի 73-րդ հոդվածով ներկայացվող պահանջների, հայցադիմումը նաև պետք է ներառի՝

- տեղեկություններ՝ հայցադիմումը ներկայացնելու համար հիմք հանդիսացած գործողությունների կատարման վայրի և ժամանակի մասին.
- հայցադիմումի համար հիմք հանդիսացած գործողությունների կատարման համար վարչական պատասխանատվություն նախատեսող օրենքի դրույթները.
- հայցվորի պահանջը վարչական պատասխանատվության ենթարկելու մասին:

Վերջապես, եթե հայցադիմումը ներկայացնում է կուսակցությունների դաշինքը կամ քարոզչության կողմը, այն, ի լրումն վերը նշված պահանջների և ՎԴՕ 73-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված տեղեկատվության փոխարեն, ներառում է՝

- կուսակցության դաշինքի ներկայացրած հայցադիմումի դեպքում՝ կուսակցության դաշինքի անվանումը, լիազոր ներկայացուցչի վերաբերյալ անձնական տվյալները, բնակության (գտնվելու) վայրը, ծանուցման հասցեն (եթե այն տարբերվում է բնակության վայրից).
- քարոզչության կողմի ներկայացրած հայցադիմումի դեպքում՝ քարոզչության կողմի լիազոր ներկայացուցչի վերաբերյալ անձնական տվյալները, բնակության (գտնվելու) վայրը, ծանուցման հասցեն (եթե այն տարբերվում է բնակության վայրից):

Հաջորդ առանձնահատկությունը վերաբերում է ապացուցման բեռին: Հայցվորն է կրում այն փաստերի ապացուցման բե-

որ, որոնք ընկած են խախտումն արձանագրելու կամ հայցադիմումի հիմքում, քանի որ կլինե՞ր անարդարացի՝ պատասխանողին պարտավորեցնել ապացուցել, որ իր կողմից չեն կատարվել իրեն մեղսագրվող իրավախախտումները: Ավելին, ուղղակիորեն նախատեսված է, որ արձանագրությունն ինքնին ապացույց չէ: Ասվածից կարելի է հանգել հետևության, որ այն դեպքում երբ փաստաբանին դիմել է ոչ թե իրավասու ընտրական հանձնաժողովն, այլ ՎՂՕ 3-րդ հոդվածի 2.1-րդ մասի մեջ նշված որևիցե սուբյեկտ, առավել նպատակահարմար է անմիջապես դիմել ՀՀ վարչական, եթե փաստաբանն ի սկզբանե տիրապետում է ՎԻՎՕ 251-րդ հոդվածով նախատեսված բավարար ապացույցների՝ վարչական իրավախախտման փաստն ապացուցելու համար, քանի որ նույնիսկ եթե սկզբնապես ներկայացվի դիմում՝ իրավասու ընտրական հանձնաժողով՝ խնդրելով արձանագրել խախտումը, և նույնիսկ եթե խնդրանքը բավարարվի և հանձնաժողովը ներկայացնի համապատասխան հայցադիմում ՀՀ վարչական դատարան, միննույն է՝ դատարանի կողմից իրավախախտումը կատարելու փաստն հաստատելու համար հիմք է ընդունվելու ոչ թե արձանագրությունը, այլ ՎԻՎՕ 251-րդ հոդվածով նախատեսված այլ ապացույցների ամբողջությունը: Այլ կերպ ասած, առաջնային խորհրդատվության և հետագա ծառայության ժամանակ փաստաբանի առջև դրված է խնդիր՝ նշված հարցը պարզաբանելու վերաբերյալ: Պետք է ավելացնել նաև, որ անմիջապես քվեարկության օրը համապատասխան տեղամասում հայտնաբերված խախտումների դեպքում առավել արդյունավետ է սկզբնապես դիմել տեղամասային ընտրական հանձնաժողով՝ խախտումն արձանագրելու խնդրանքով, քանի որ գործնականում դժվար է ինքնուրույն հավաքել ապացույցներ

հենց տեղամասում տեղ գտած խախտումների վերաբերյալ: Իրավիճակն այլ է, օրինակ, նախընտրական քարոզչության կարգի խախտմանն ուղղված զանցանքների դեպքում, երբ խախտման փաստն, օրինակ կարող է հաստատվել անթույլատրելի ժամանակահատվածում հեռուստաթերի միջոցով իրականացված քարոզչության շնորհիվ: Այս առթիվ պետք է նշել, որ փաստաբանը պետք յուրաքանչյուր անգամ կողմնորոշվի՝ ըստ դեպքի հանգամանքների՝ գնահատելով, օրինակ՝ առկա են արդյոք վարչական պատասխանատվությունը բացառող, ինչպես նաև այլ հանգամանքներ, թե ոչ, որոնց առկայությունը կամ բացակայությունը պարտավոր է պարզել Վարչական դատարանը այսպիսի գործեր քննելիս:

Այսպես, հաջորդ առանձնահատկությունը վերաբերում է այն հարցերի շրջանակին, որոնք պետք է պարզաբանվեն Վարչական դատարանի կողմից այսպիսի գործերի դեպքում, դրանք են՝

- ՎԻՎՕ 247-րդ և 279-րդ հոդվածներում նշված հարցերը,
- տեղի՞ է ունեցել արդյոք վարչական իրավախախտման մասին արձանագրության կամ հայցադիմումի մեջ նշված արարքը,
- առկա՞ է արդյոք հայցադիմումում նշված անձի՝ դա կատարելու փաստը,
- նախատեսվա՞ծ է արդյոք օրենքով վարչական պատասխանատվություն տվյալ արարքը կատարելու համար:

Առավել արդյունավետ է փաստաբանի կողմից նախապես ինքնուրույն իրագործել նշված հարցերի պարզաբանումը՝ այսպիսի գործերով հաջողություն ունենալու հավանականությունը կանխատեսելու նպատակով:

ՎԻՎՕ 247-րդ հոդվածի համաձայն՝

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝

- վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությունը.
- եթե անձը վարչական իրավախախտում կատարելու պահին չի հասել տասնվեց տարեկան հասակի.
- հակաիրավական գործողություն կամ անգործություն կատարած անձի անմեղսունակությունը.
- անձի գործողությունը ծայրահեղ անհրաժեշտության կամ անհրաժեշտ պաշտպանության վիճակում.
- համաներման մասին օրենքի ընդունումը, եթե այն վերացնում է վարչական տույժի կիրառումը.
- վարչական պատասխանատվություն սահմանող ակտի վերացումը.
- վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության պահին սույն օրենսգրքի 37 հոդվածով նախատեսված ժամկետներն անցնելը.
- վարչական պատասխանատվության ենթարկվող անձի նկատմամբ վարչական տույժ նշանակելու մասին իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) որոշման առկայությունը նույն փաստի վերաբերյալ, կամ ընկերական դատարանի չբեկանված որոշման առկայությունը, եթե նյութերը ընկերական դատարանին են հանձնվել տվյալ գործով վարչական տույժ նշանակելու իրավունք ունեցող մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, կամ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը կարճելու մասին

չբեկանված որոշման առկայությունը, ինչպես նաև տվյալ փաստով քրեական գործի առկայությունը.

- այն անձի մահը, որի նկատմամբ սկսված է եղել գործի վարույթը:

ՎԻՎՕ 279-րդ հոդվածի համաձայն՝

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝

- կատարվել է, արդյոք, վարչական իրավախախտում.
- արդյոք, տվյալ անձը մեղավոր է այն կատարելու մեջ.
- արդյոք, նա ենթակա է վարչական պատասխանատվության.
- կան, արդյոք, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներ.
- պատճառվել է, արդյոք, գույքային վնաս,
- հիմքեր կան, արդյոք, վարչական իրավախախտման վերաբերյալ նյութերը ընկերական դատարանի, ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված՝ հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի, հասարակական կազմակերպության, աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելու համար,
- ինչպես նաև պարզել գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

Ինչպես կարելի է տեսնել, ցանկը սպառիչ չէ (նախավերջին կետը նույնիսկ արդիական չէ և վերաբերում է խորհրդային ժամանակահատվածին): Դա նշանակում է, որ յուրաքանչյուր անգամ գործի ճիշտ լուծման համար անհրաժեշտ հանգամանքների ցանկն անհրաժեշտ է հստակեցնել՝ ըստ տվյալ դեպքի:

Մաս 4. ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Որոշումների, գործողությունների, անգործության բողոքարկումը վարչական կարգով

Ընտրական հարաբերություններին մասնակցում են տարբեր իրավունքի սուբյեկտներ, այդ թվում՝ համապատասխան լիազորությունների շրջանակ ունեցող պետական մարմիններ, որոնք իրավասու են ընդունել որոշումներ, դիմել գործողությունների, ինչպես նաև ցուցաբերել անգործություն՝ իրենց իրավասության մեջ մտնող հարցերի կապակցությամբ: Հաճախ ընտրական իրավահարաբերության մասնակիցն համաձայն չէ տվյալ վարչական մարմնի որոշմանը կամ գտնում է, որ մարմնի գործողությունը կամ անգործությունն իրավաչափ չէ:

Ոստիկանության որոշումներ

Այսպես, ԸՕ 9-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ՝ Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը վարում և ընտրողների ցուցակը կազմում է լիազոր մարմինը, որը պատասխանատու է Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը և ընտրողների ցուցակը Ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան վարելու և կազմելու համար: ՀՀ վարչապետի 11.06.2018թ.-ի թիվ 751-Լ որոշման համաձայն՝ ՀՀ ոստիկանության գործառույթներից մեկը ընտրողների ռեգիստրի վարումը և ընտրողների ցուցակների կազմումն է: Գործնականում չի բացառվում, որ քաղաքացիներից որևիցե մեկն ունենա գանգատներ՝ կապված ընտրողների ռեգիստրում

կամ ցուցակում տեղ գտած անձնությունների հետ: Ընտրական օրենսգիրքը նախատեսում է, որ այդ դեպքում յուրաքանչյուր ոք, իրավունք ունի ներկայացնել դիմում Լիազոր մարմին (ՀՀ ոստիկանություն)՝ խնդրելով վերացնել անձնությունները (ԸՕ 9-րդ հոդվածի 5-րդ մաս, 14-րդ հոդված): Ընդ որում, ինչպես բխում է օրենսդրական կարգավորումից, այդպիսի դիմում կարող են ներկայացնել ինչպես այն սուբյեկտները, որոնց անձին է վերաբերում տվյալ անձնությունը, այնպես էլ ցանկացած այլ սուբյեկտներ: Դա նշանակում է, որ այս հարցով փաստաբանի հաճախորդ կարող է լինել ցանկացած անձ, օրինակ՝ կուսակցության ներկայացուցիչ, թեկնածու և այլն, որը ծանոթանալով ընտրողների ռեգիստրին կամ ցուցակին՝ հայտնաբերել է անձնություններ: Ընտրողների ռեգիստրը տեղադրվում է www.elections.am կայքում և թարմացվում է ԸՕ սահմանված պարբերականությամբ, իսկ ընտրողների ցուցակը տեղադրվում է police.am կայքում և նույնպես թարմացվում է ԸՕ սահմանված պարբերականությամբ: Առավել մանրամասն կարգավորումները նախատեսված են ԸՕ 2-րդ գլխի մեջ: Ընտրողների ռեգիստրում կամ ցուցակներում տեղ գտած անձնությունների վերաբերյալ դիմումները ներկայացվում են **ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն** (այսուհետ՝ Վարչություն): Եթե դիմումը ներկայացվեց որևիցե այլ ստորաբաժանում, տեղի կունենա ժամանակի կորուստ, քանի որ ներկայացված դիմումն անհրաժեշտ լինի վերահասցեագրել Վարչություն:

Ռեգիստրում տեղ գտած անձնությունները (այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող) վերացնելու մասին դիմումը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Լիազոր մարմինը «Բնակչության պետական ռեգիստրի մասին» Հայաստանի Հանրապետու-

թյան օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում ընտրողների ռեգիստրում վերացնում է անճշտությունները՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով դիմողին (ԸՕ 9-րդ հոդված):

Ընտրողների ցուցակում տեղ գտած անճշտությունների վերաբերյալ դիմումները կարող են ներկայացվել Ընտրական օրենսգրքով սահմանված ժամանակահատվածում: Մասնավորապես, յուրաքանչյուր ոք իրավունք ունի քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները (այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող) վերացնելու մասին դիմում ներկայացնելու Լիազոր մարմին: Լիազոր մարմինը դիմումը ստանալուց հետո՝ 5 օրվա ընթացքում, սակայն քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 7 օր առաջ, սույն օրենսգրքով սահմանված հիմքերի առկայության դեպքում ընտրողների ցուցակում վերացնում է անճշտությունները՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով դիմողին: Եթե դիմումը դիմողի անձին չի վերաբերում, ապա դիմումը բավարարելու դեպքում այդ մասին լիազոր մարմինը ծանուցում է azdarar.am համացանցային կայքի միջոցով (ԸՕ 14-րդ հոդված):

Ընտրողների ցուցակներում անճշտությունները վերացնելու և ցուցակում լրացում կատարելու վերաբերյալ վեճերը լուծվում են վերադասության կամ դատական կարգով՝ համապատասխանաբար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Տվյալ դեպքում խոսքը Վարչության վերադասի մասին է: Վարչությունն ընդգրկված է Ոստիկանության կենտրոնական ապարատի կազմում: Ուստի, վերադասության կարգով բողոքները պետք է ներկայացնել ՀՀ ոս-

տիկանապետին: Վարչական դատարանում այսպիսի բողոքներ պարունակող դիմումների քննության վերաբերյալ նախատեսված է առանձին վարույթի տեսակ՝ ՎԴՕ 28-րդ գլխի մեջ: Դրա 208-րդ հոդվածի համաձայն՝

«1. Ընտրական գործերը միանձնյա քննում և լուծում է վարչական դատարանի դատավորը, բացառությամբ՝

...

2) ընտրողների ցուցակների ճշգրտման վերաբերյալ գործերի, որոնք սույն օրենսգրքով սահմանված կարգով քննում են պատասխանողի գտնվելու վայրի՝ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանները»:

Վերադաս լիազոր մարմինը կամ դատարանն ընտրողների ցուցակներում անճշտությունները վերացնելու վերաբերյալ ակտը կայացնում է բողոքը (դիմումը) ստանալուց հետո՝ 3 օրվա ընթացքում, իսկ քվեարկության և դրան նախորդող 3 օրվա ընթացքում՝ այնպիսի ժամկետներում, որ ընտրողը հնարավորություն ունենա մասնակցելու քվեարկությանը: Վերադաս լիազոր մարմինը քվեարկության և դրան նախորդող 3 օրվա ընթացքում բողոքը (դիմումը) բավարարելիս դիմողին տրամադրում է տեղեկանք քվեարկության օրը կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու մասին: Ընտրողների ցուցակներում անճշտությունները վերացնելու վերաբերյալ ակտը կատարում է լիազոր մարմինը: Քվեարկության օրն ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին ակտի հիման վրա ընտրողի տվյալները ներառվում են քվեարկության օրը կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակում՝ Ընտրական օրենսգրքի 15-րդ հոդվածով սահ-

մանված կարգով՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից: Դատարաններն ընտրողների ցուցակներում ընտրողներին ընդգրկելու վերաբերյալ դատական ակտի պատճենն ուղարկում են լիազոր մարմին՝ նաև ընտրողների ռեգիստրում համապատասխան փոփոխություններ կատարելու համար: Ընտրական հանձնաժողովներն իրավունք չունեն սեփական նախաձեռնությամբ որևէ փոփոխություն՝ ճշտում կամ լրացում կատարելու ընտրողների ցուցակներում (այդ թվում՝ լրացուցիչ ցուցակներում):

Ընտրական հանձնաժողովների որոշումներ, գործողություններ (անգործություն)

Բացի ընտրողների ցուցակներից, ընտրական հարաբերությունները վերաբերում են նաև ընտրական տեղամասերին (ԸՕ 3-րդ գլուխ), նախընտրական քարոզչությանը (ԸՕ 4-րդ գլուխ), ընտրությունների ֆինանսավորմանը (ԸՕ 5-րդ գլուխ), դիտորդերի, վստահված անձանց, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների, լիազոր ներկայացուցիչների կարգավիճակին (ԸՕ 6-րդ գլուխ), ընտրական հանձնաժողովներին (ԸՕ 7-9-րդ գլուխներ), քվեարկությանը (ԸՕ 10-12-րդ գլուխներ), Ազգային ժողովի ընտրություններին (ԸՕ 10-18-րդ գլուխներ), համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու անդամի ընտրություններին (ԸՕ 19-24-րդ գլուխներ), Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանիների ընտրություններին (ԸՕ 25-30-րդ գլուխներ), այն հարաբերություններին, որոնք կարգավորված են ԸՕ 31-րդ գլխով, որտեղ նախատեսված են անցումային, լրացուցիչ և եզրափակիչ դրույթները: Այս հարաբերությունների ընթացքում ընտրական հանձնաժողովներն ունեն կենտրոնական դե-

րակատարություն, քանի որ հանձնաժողովներն ապահովում են ընտրողների ընտրական իրավունքի իրականացումը և պաշտպանությունը (ԸՕ 37-րդ հոդված): Հայաստանի Հանրապետությունում գործում է եռաստիճան համակարգ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, տարածքային և տեղական ընտրական հանձնաժողովներ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իրավասու է ընդունել ինչպես անհատական, այնպես էլ նորմատիվ իրավական ակտեր, իսկ տարածքային և տեղական ընտրական հանձնաժողովներն իրավասու են ընունել միայն անհատական իրավական ակտեր: Բոլոր հանձնաժողովների կողմից ընդունված իրավական ակտերը ենթակա են պարտադիր կատարման (ԸՕ 37-րդ հոդված): Ընտրական հանձնաժողովների որոշումների, գործողության, անգործության բողոքարկման կարգը նախատեսված է ԸՕ 48-րդ հոդվածով: Դրա համաձայն՝ բողոքարկումը կարող է իրագործվել վարչական կամ դատական կարգով, իսկ եթե բողոքարկվել է երկու կարգով միաժամանակ (անկախ նրանից, թե որտեղ է բերվել բողոքը սկզբում), ապա վարչական վարույթը կարճվում է: Դատական կարգով բողոքարկման կարգը նախատեսված է Վարչական դատավարության օրենսգրքով և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Պետք է նաև նշել, որ կախված որոշման տեսակից՝ բողոքարկումը կարող է կատարվել բացառապես անմիջապես դատարան:

Այսպես, տեղամասային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումների, գործողությունների կամ անգործության դեմ բողոքները ԸՕ 48-րդ հոդվածով նախատեսված ժամկետներում ներկայացվում են համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով: Տարածքային ընտրական հանձնաժողովի՝ ընտ-

րությունների արդյունքներով որոշումները բողոքարկվում են վարչական դատարան, իսկ մնացած որոշումները, ինչպես նաև գործողություններն ու անգործությունը կարող են սկզբնապես բողոքարկվել Կենտրոնական ընտրական հանձնաժողով: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումները կարող են բողոքարկվել սահմանադրական դատարան: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի այլ որոշումները, ինչպես նաև գործողությունները (անգործությունը) կարող են բողոքարկվել վարչական դատարան:

ԸՕ 48-րդ հոդվածով հստակ նախատեսված է, թե որ սուբյեկտներն են իրավասու ներկայացնել բողոք, դրանք են՝

- յուրաքանչյուր ոք, ով գտնում է, որ խախտվել կամ կարող է խախտվել իր՝ Ընտրական օրենսգրքով սահմանված սուբյեկտիվ ընտրական իրավունքը.
- վստահված անձը, եթե գտնում է, որ խախտվել է իր կամ իր վստահորդի՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքը.
- դիտորդը կամ այցելուն, եթե գտնում է, որ խախտվել է իր՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքը.
- զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը, եթե գտնում է, որ խախտվել է իր՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքը.
- ընտրություններին մասնակցող կուսակցության լիազոր ներկայացուցիչը, եթե գտնում է, որ խախտվել է իր կամ իր վստահորդ կուսակցության կամ կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքը:

Նշված կարգավորումից հետևում է, որ անհրաժեշտ է որոշակի շահագրգռվածություն բողոքարկվող հարցի շուրջ, և բողոքը չի կարող ուղղված լինել այլ անձանց շահերի պաշտպանությանը: Այսինքն, նման բողոքները չեն կարող բավարարվել, նույնիսկ եթե հիմնավոր են: Ուստի, առաջին հերթին փաստաբանի կողմից անհրաժեշտ է ճշգրտել՝ արդյոք իրեն դիմած հաճախորդը պատշաճ սուբյեկտ է, թե ոչ: ԸՕ 48-րդ հոդվածով նախատեսված են նաև առավել մանրամասն կարգավորումներ՝ բողոքարկող սուբյեկտի վերաբերյալ:

Մասնավորապես, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի և կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ դիմում կարող է ներկայացնել միայն ընտրություններին մասնակցող կուսակցությունը, իսկ համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ դիմում կարող է ներկայացնել համապատասխանաբար միայն համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն: Նշված դիմումները կարող են ներկայացվել միայն գրանցումն իրականացրած ընտրական հանձնաժողով: Կայացված որոշումները կարող են բողոքարկվել վարչական դատարան:

Հաջորդ բացառությունը վերաբերում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումներին, որոնք ներկայացվում են միայն համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով՝ բացառապես հետևյալ անձանց կողմից՝

- ընտրություններին մասնակցող կուսակցությունը, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական

ցուցակում ընդգրկված թեկնածուն, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն.

- վստահված անձը, եթե քվեարկության օրը ներկա է գտնվել քվեարկության սենյակում կամ ներկա է գտնվել տեղամասային ընտրական հանձնաժողովի արդյունքների ամփոփման նիստին.
- համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը, եթե արձանագրությունում կատարել է գրառում հատուկ կարծիք ունենալու մասին:

Եթե դիմումի քննարկման արդյունքով տարածքային ընտրական հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ քվեարկության ընթացքում տեղի են ունեցել Ընտրական օրենսգրքի պահանջների այնպիսի խախտումներ, որոնք կարող էին էապես ազդել քվեարկության արդյունքների վրա, և եթե հնարավոր չէ պարզել քվեարկության իրական արդյունքները, ապա տարածքային ընտրական հանձնաժողովն այդ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները ճանաչում է անվավեր: Այդ դեպքում նաև նյութերն ուղարկվում են Դատախազություն:

Ինչ վերաբերում է ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումներին, ապա դրանք ներկայացնելու իրավունք ունեն կուսակցությունը, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն: Այդ դիմումները ներկայացվում են ընտրությունների արդյունքներն ամփոփող ընտրական հանձնաժողով և դրանց քննարկումը կատարվում է ընտրությունների արդյունքների ամփոփման շրջանակում՝ առանց դրանց վերաբերյալ առանձին որոշում կայացնելու:

Հաջորդ բացառությունը վերաբերում է այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմում ներկայացնելուն, որի իրավունքն ունեն՝

- ընտրություններին մասնակցող կուսակցության լիազոր ներկայացուցիչը, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն.
- վստահված անձը.
- համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը.
- քվեարկությանը չմասնակցած այն ընտրողը, որի տվյալների դիմաց, ընտրողների ցուցակում առկա է ստորագրություն քվեարկությանը մասնակցելու վերաբերյալ:

Դիմումը ներկայացվում է համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով: Ընդ որում, դիմումը ներկայացնելիս անհրաժեշտ է հստակեցնել, թե որ դեպքի մասին է խոսքը՝ Հայաստանի Հանրապետությունից բացակայող և քվեարկությանը չմասնակցած, թե Հայաստանի Հանրապետությունում գտնվող և քվեարկությանը չմասնակցած անձանց մասին: Այսպիսի առանձնացում չկատարելու դեպքում հանձնաժողովը դիմումն ըստ էության չի քննվում. վարչական վարույթ չի հարուցվում: Վարույթն հարուցվելու դեպքում այն քննվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ վարչարարության հիմնարար սկզբունքների պահպանմամբ: ԸՕ 48-րդ հոդվածի 16-18-րդ մասերը նախատեսում են մանրամասն կարգավորումներ՝ այս դիմումների վերաբերյալ:

4.2. Որոշումների, գործողությունների բողոքարկումը դատական կարգով

Վարչական դատավարություն

Վարչական դատավարության վերաբերյալ օրենսգրքի 5-րդ բաժինը նվիրված է հատուկ վարույթների տեսակներին, որոնցից մեկն է՝ «Ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերի վարույթը» (ՎԴՕ 28-րդ գլուխ): Դրա առաջին հոդվածը նախատեսում է այսպիսի գործերի հասկացությունը: Մասնավորապես, ՎԴՕ 206-րդ հոդվածի համաձայն՝

«1. Ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերը Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների, հանրաքվեի կազմակերպման և անցկացման ընթացքում ընտրական ու հանրաքվեին մասնակցելու իրավունքների խախտման վերաբերյալ ներկայացված հայցադիմումների հիման վրա՝ սույն գլխին համապատասխան հարուցված գործերն են (այսուհետ՝ ընտրական գործ)»:

Դա նշանակում է, որ Ընտրական օրենսգրքով նախատեսված բոլոր իրավահարաբերությունների շրջանակում ծագած վեճերով բողոքները դատական կարգով քննվում են վարույթի այս տեսակի համար նախատեսված առանձնահատկություններով՝ վարչական դատավարության կարգով, բացառությամբ՝ ՀՀ սահմանադրական դատարան ներկայացվող բողոքների:

Ընտրական գործերով վարչական դատարան կարող են ներկայացնել հայցադիմում համապատասխան ընտրական հանձնաժողովները՝ ԸՕ նախատեսված դեպքերում, ինչպես նաև

ՎԴՕ 3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված անձինք, այսինքն՝ ընտրական իրավահարաբերությունների այն մասնակիցները, որոնք վիճարկում են պետական մարմինների որոշումները, գործողությունները (անգործությունը):

Ընդ որում, Վարչական դատարանը քննում է բոլոր ընտրական գործերը, բացառությամբ՝ ընտրողների ցուցակների ճշգրտման վերաբերյալ գործերի, որոնք Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քննում է պատասխանողի գտնվելու վայրի՝ ***ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարանը*** (ՎԴՕ 208-րդ հոդված):

Նկատի ունենալով, որ ընտրությունների ժամանակ անհրաժեշտ է իրագործել բավականին արագ քննություն՝ անձանց կողմից ներկայացված բողոքներով՝ Վարչական դատավարության օրենսգրքով նատեսված են հատուկ ժամկետներ՝ հայցային վաղեմության, հայցադիմումը վարույթ ընդունելու և քննության համար (ՎԴՕ 209-րդ հոդված): Այսպես՝

«1. Հայցադիմումը վարչական դատարան կարող է ներկայացվել 3 օրացուցային օրվա ընթացքում այն օրվանից, երբ հայցվորն իմացել է կամ պարտավոր էր իմանալ իր ընտրական իրավունքի խախտման մասին:

2. Վարչական դատարանը պարտավոր է սույն օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ ներկայացված հայցադիմումը 24 ժամվա ընթացքում ընդունել վարույթ, եթե առկա չեն սույն օրենսգրքի 79-րդ և 80-րդ հոդվածներով սահմանված հիմքերը»:

209-րդ հոդվածը նախատեսում է նաև՝ ինչ ժամկետներում պետք է քննվեն ներկայացված և վարույթ ընդունված հայցադիմումները, որոնք տարբեր են՝ ըստ բողոքի առարկայի: Օրինակ՝

«4. Ընտրական հանձնաժողովների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի նկատմամբ հսկողություն իրականացվելու հետ կապված հայցադիմումներ կարող են ներկայացվել նախընտրական քարոզչությունը սկսվելու օրվանից մինչև քվեարկության հաջորդ օրը ներառյալ: Այդ հայցադիմումները քննվում են հինգ օրացուցային օրվա ընթացքում, քվեարկության օրվա նախորդող հինգից երկու օրացուցային օր առաջ ներկայացված հայցադիմումները՝ մինչև քվեարկության օրը, իսկ քվեարկության օրը, դրան նախորդող կամ հաջորդող օրը ներկայացված հայցադիմումները՝ ոչ ուշ, քան ընտրությունների արդյունքների ամփոփման՝ օրենքով սահմանված ժամկետը լրանալուն նախորդող օրը»:

209-րդ հոդվածը նախատեսում է նաև այլ կարգավորումներ՝ ուրիշ բողոքներով հայցադիմումների համար, իսկ հոդվածի 10-րդ մասը սահմանում է ընդհանուր մոտեցում, որը բոլոր գործերով անհրաժեշտ է պահպանել դատարանների կողմից՝

«10. Սույն հոդվածով սահմանված հատուկ ժամկետների հաշվառմամբ դատավորը նման գործեր քննելիս պետք է ձգտի գործի քննությունն իրականացնել այնպիսի ժամկետում, որ չխաթարվեն հետագա ընտրական գործընթացները»:

Նախատեսված են առանձնահատկություններ նաև՝ 1) Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի վիճարկման գործերի համար (ՎԴՕ 210-րդ հոդված), 2) Թեկնածուների, կուսակցությունների ընտրական ցուցակները չգրանցելու, գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ հայցադիմումների քննության համար (ՎԴՕ 211-րդ հոդված), 3) Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերի համար (ՎԴՕ 212-րդ հոդված):

Թերևս հատուկ վարույթի այս տեսակի էական առանձնահատկությունն այն է, որ

«1. Ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերով վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը վերջնական են, վերանայման ենթակա չեն և ուժի մեջ են մտնում հրապարակման պահից» (ՎԴՕ 213-րդ հոդված):

Սահմանադրական դատավարություն

Ընտրական օրենսգրքի 102-րդ հոդվածը նախատեսում է, թե ՀՀ ազգային ժողովի ընտրությունների հետ կապված որ հարցերի դեպքում կարելի է ներկայացնել դիմում ՀՀ սահմանադրական դատարան: Մասնավորապես,

«1. Ազգային ժողովի ընտրությունների արդյունքով սույն օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասով, 97-րդ հոդվածի 4-րդ մասով, 99-րդ հոդվածով ընդունված որոշումների վիճարկման մասին դիմում»

ներ սահմանադրական դատարան կարող են ներկայացվել համապատասխան որոշման հրապարակման օրվանից հետո՝ 5-րդ օրը՝ մինչև ժամը 18.00-ն»:

ԸՕ 95-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից բխում է, որ այն դեպքում, երբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընդունում է ստորև շարադրված որոշումներից որևիցե մեկը, այն կարող է վիճարկվել Սահմանադրական դատարանում՝ վերը նշված ժամկետում ներկայացնելով դիմում՝

1) Ազգային ժողով ընտրվելու և մանդատների բաշխման մասին.

2) Ազգային ժողովի պատգամավորների մանդատների նախնական բաշխման մասին.

3) առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն նշանակելու մասին.

4) Ազգային ժողովի ընտրություններն անվավեր ճանաչելու և ընտրությունների վերաքվեարկություն նշանակելու մասին.

5) Ազգային ժողովի ընտրությունների վերաքվեարկությունն անվավեր ճանաչելու մասին: Այդ դեպքում Հանրապետության նախագահը նշանակում է Ազգային ժողովի նոր հերթական ընտրություն:

Նմանապես, սահմանադրական դատավարության կարգով կարող են վիճարկվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի այն որոշումները, որոնք վերաբերում են ընտրության երկրորդ փուլ անցկացնելուն կամ Ազգային ժողով ընտրվելուն (ԸՕ 97-րդ հոդվածի 4-րդ մաս), ինչպես նաև՝ որոնք վերաբերում են ընտրության երկրորդ փուլի արդյունքներն ամփոփելուն՝ 1) Ազգային ժողով ընտրվելու մասին, 2) առանձին ընտրական տեղա-

մասերում վերաքվեարկություն նշանակելու մասին, 3) Ազգային ժողովի ընտրություններն անվավեր ճանաչելու մասին (այս դեպքում դարձյալ Հանրապետության նախագահը նշանակում է Ազգային ժողովի նոր հերթական ընտրություն), ինչպես նաև՝ լրացուցիչ մանդատների բաշխմանը (ԼՕ 99-րդ հոդված):

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է սահմանադրական դատավարության կարգը, իսկ այդ օրենքի 77-րդ հոդվածն ուղղակիորեն վերաբերում է Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշման հետ կապված վեճի լուծմանը: Դրա առաջին մասը նախատեսում է, որ այսպիսի վեճերով Սահմանադրական դատարան կարող են դիմել ընտրություններին մասնակցող կուսակցությունները կամ կուսակցությունների դաշինքը, իսկ որպես պատասխանող կողմ դատարանը ներգրավվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին: Անհրաժեշտության դեպքում կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ Սահմանադրական դատարանը կարող է որպես հարակից պատասխանող ներգրավել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին, որոնց որոշումները կամ գործողությունները կարող էին ներգործել ընտրությունների արդյունքների վրա, կամ որոնք պարտավոր էին (պարտավոր են) օրենքով սահմանված կարգով ապահովել և պաշտպանել ընտրական իրավունքները, բացառությամբ դատարանների: Բնականաբար, որպես կանոն այսպիսի վեճերը շոշափում են այլ կուսակցությունների կամ դրանց դաշինքի շահերը, ուստի դրանք նույնպես կարող են Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշմամբ որպես երրորդ անձինք ներգրավվել դատավարությանը՝ իրենց դիմումի հիման վրա, իսկ այն դեպքերում, երբ

Սահմանադրական դատարանի որոշումը պարտադիր տարածվելու է նաև երրորդ անձանց վրա, ապա Սահմանադրական դատարանն ինքն է պարտավոր այդ անձանց ներգրավել դատավարությանը: Երրորդ անձինք դատավարությանը կարող են ներգրավվել գործի քննության ցանկացած փուլում:

Սահմանադրական դատարանն իրավասու է իր որոշումն ընդունելու համար անհրաժեշտ ապացույցներ (փաստերի վերաբերյալ տեղեկություններ) ձեռք բերելը հանձնարարելու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին, այդ թվում՝ դատարաններին և դատախազության մարմիններին, անհրաժեշտության դեպքում՝ նաև իր աշխատակազմի աշխատողներին: Ներկայացված ապացույցները ենթակա են հետազոտման Սահմանադրական դատարանի կողմից՝ ՄԴ օրենքով սահմանված ընդհանուր կարգով: Սահմանադրական դատարանն իրավասու է նաև ձևավորելու աշխատանքային խումբ՝ ներգրավելով համապատասխան ոլորտի փորձագետների:

Այսպիսի գործերի դատաքննությունն իրականացվում է բանավոր ընթացակարգով: Փաստերի վերաբերյալ դիմող կողմի ներկայացրած տեղեկությունները համարվում են հավաստի, եթե Կենտրոնական ընտրական հանձնաժողովն հրաժարվում է դրանց վերաբերյալ իր դիրքորոշումն արտահայտելուց, և եթե դրանք չեն հերքվում Սահմանադրական դատարանի կողմից ձեռք բերված, տվյալ գործով որոշում ընդունելու համար էական նշանակություն ունեցող այլ ապացույցներով: Եթե Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընդունում է այն հանգամանքները, որոնցով դիմող կողմը հիմնավորում է իր պահանջներն ու առարկությունները, ապա դիմող կողմը ազատվում է այդ հանգամանքների վերաբերյալ հետագայում ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտությունից:

Այսպիսի գործերի քննությունը կարող է կասեցվել միայն այն դեպքում, երբ կասեցումը չի խոչընդոտի տվյալ գործի քննությունը Սահմանադրությամբ և դիմումի մուտքագրման օրվանից ոչ ուշ, քան 15 օր հետո ավարտելուն:

Սույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարանն ընդունում է հետևյալ որոշումներից որևէ մեկը՝

1) Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումը թողնել ուժի մեջ:

2) անվավեր ճանաչել Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումը և

ա. անվավեր ճանաչել ընտրությունների արդյունքները,

բ. անվավեր ճանաչել ընտրությունների արդյունքները և սահմանել մանդատների բաշխման կարգը,

գ. նշանակել ընտրությունների երկրորդ փուլ:

Եթե գործի քննության արդյունքում Սահմանադրական դատարանը, սպառելով ապացույցներ ձեռք բերելու համար սույն օրենքով նախատեսված բոլոր միջոցները, այդուհանդերձ, հնարավորություն չի ունեցել պարզելու ընտրությունների իրական արդյունքները, սակայն Սահմանադրական դատարանի կողմից որպես հավաստի գնահատված ապացույցներից ակնհայտ է դարձել, որ ընտրախախտումներն ունեցել են կազմակերպված, զանգվածային, կրկնվող կամ պարբերական բնույթ, և դրանց համադրումը վկայում է դրանց միջև համակարգային այնպիսի փոխկապակցվածության մասին, որի պայմաններում խախտվում են Սահմանադրության 7-րդ հոդվածում ամրագրված ընտրական իրավունքի սկզբունքները, ապա որոշում ընդունելիս Սահմանադրական դատարանն իրավասու է այդ հիմքով անվավեր ճանաչելու ընտրությունների արդյունքները: